Քամու ուղղությունը և ուժը դիտելու համար տարբեր բարձրություններում գործածվում են գունդ-սավառնորդներ: Գունդ-սավառնորդը ջրածնով լցված մի փոքրիկ ուժինն գունդ է: Վորովինեալ ջրածնն ողից շատ թեթև է, ապա գունդը հավասար արագությամբ բարձրանում է վերե: Ողում ազատ թռչելով, նա նույն ժամանակ քամուց մի կողմ է քշվում, վորն այս կամ այն բարձրության վրա տարբեր արագությամբ է փչում: Գնդի շարժումը դիտում են տեղորդիտի, այսինքն հասուլ հեռադիտակի միջոցով, և վորով ժամանակամիջոցներից հետո հաշվում են, ըստ տեղորդիտի, ուղղաձիգ և հորիզոնական անկյունները: Այս հաշվումները թույլ են տալիս հետազայում հաշվելու, թե ինչ բարձրության վրա, ինչ ուղղությամբ և ինչպիսի արագությամբ և փչում քամին:

Գունդ-զոնդը մի թեթև ուժինն գունդ է 2—3 մետր ծավալով, վորը նույնպես լցրած ն ջրածնով: Նրանից կախ են տալիս մի պարաշյուտ և ինքնագիր գործիք—մետեորոպրաֆը, վորը գործ է ջերմաստիճանը, խոնալությունը և մթնոլորտային ճնշումը: Գունդը նրանից կախված մետեորոպրաֆի և պարաշյուտի հետ միասին բարձրանում է վերե, ավելի ու լավելի լայնանալով: Վորով բարձրության վրա գունդը սպասովում է և սկսում է իջնել ցած: Գնդի թաղանթը սահուս է կերպուց, վորով նա միացած եր մետեորոպրաֆի և պարաշյուտի հետ: Պարաշյուտը բացվում է և մետեորոպրաֆը ազատ և դանդաղ իջնում է ցած:

Այսպիսի գնդերը բարձրացել են մինչև 37 կիլոմետր բարձրություն վրա և մթնոլորտի բարձր շերտերի վիճակի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են տվել:

Զոնդ-զոնդերի միջոցով գիտումներ կատարելու անհարմարությունը կայանում է նրանում, վոր նախորոք չի կարելի իմանալ, թե վորտեղ և իջնելու պարաշյուտը մետեորոպրաֆի հետ, այդ պատճառով ել հաճախ գործիքը կորում է: Ուստի գործածվում են մի քիչ ավելի մեծ կալած գնդեր, բայց նրանց միջոցով կարելի յետազոտել մթնոլորտի վիճակը համեմատորեն վոչ մեծ բարձրության վրա:

Մթնոլորտի հետազոտություններ կատարվում են նույնպես  
ոգապարիկների, աերոպլանների և աերոստատների ազատ թռիչք-  
ների ժամանակ, իսկ վերջին տարիները ստրատոստատների վրա  
մի քանի անգամ բարձրացել են ստրատոստիքերա:

Վերջին ժամանակ, շնորհիվ նրան, վոր այսպես կոչված  
ստրատոստատների վրա—փակ գնդոլներում—ստրատոստիքերա մի  
քանի թռիչք կատարվեց, գիտությունը հարստացավ տեղեկու-  
թյուններով ստրատոստիքերայի Փիդիկական և Քիմիական հատկու-  
թյունների մասին:

1933 թ. սեպտեմբերի 30-ին խորհրդային ստրատոստատ  
«ԽՍՀՄ»-ն ընկ. Պրոկոֆյանի հրամանատարությամբ հասավ 19  
կիլոմետր բարձրության և բարեհաջող կերպով իջավ ցած:

Ել ավելի բարձրության (22 կիլոմետր) հասավ ՕԱՀ-1  
ստրատոստատը: Բայց իջնելիս ստրատոստատը չափազանց մեծ  
արագություն զարգացրեց, գոնդոլը կտրվեց, և ստրատոստատի  
փառապանծ անձնակալմը—հրամանատար Պ. Ֆ. Ֆեղոսենկոն,  
ինժեներ Ա. Բ. Վասենկոն և գիտական աշխատավոր Ռևիսկինը  
մեռան գոնդոլի ընկնելու ժամանակի:

Ստրատոստիքերա մտնելու ձգտությունները վոչ միայն գիտական  
հետաքրքրություններից են առաջանում, այլև զուտ գործնական  
նկատառություններից—ստրատոստիքերայում, վորտեղ ողի դիմադրու-  
թյունն աննշան ե, յերկրագնդի առանձին կետերի միջև վերա-  
բարձրացին հաղորդակցություն հաստատելու ցանկությունից:

ԳԼՈՒԽ 3  
ԽՆՁԻՑ ԵՆ ԱՐԱԶԱՆՈՒՄ ՅԵՂԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐՈՒ

ՈԴԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Ինչպես արդեն ասված ե, յերկրի մակերեսութիւնի անհավասա-  
րաչափ տաքացման հետևանքով ոդն անշարժ չի մնում, այլ շա-  
րունակ տեղափոխվում է: Ողային տաք զանգվածները հասարա-  
կածից շարունակ տեղափոխվում են դեպի բնեոները: Ընդհակա-  
ռակը, բենուային շրջանակների հետևից սառն ողի զանգվածները  
տեղափոխվում են դեպի հասարակածը: Ողային զանգվածների  
տեղափոխությունների հետևանքով յեղանակը հաճախ և յերեմն  
խիստ կերպով փոխվում է: Մեզ մոտ ԽՍՀՄ ե գալիս հյուսիսից  
ցուրտ և չոր ող, յերեմն հարավ-արևելութիւն՝ տաք և խոնավ ող,  
յերեմն մերձկասպյան և միջին-ասիական տափաստաններից և  
անապատներից՝ տաք և չոր ող: Նայած, թե վորտեղից են գալիս  
դեպի մեզ ոդային զանգվածները, նրանք տարբերվում են զանա-  
զան հատկություններով և զանազան անուններ են կրում. արկ-  
տիկական ողի զանգվածներ, բենուային, արևագարձային:

Արկտիկական ողը նախքան մեզ մոտ հասնելը յերկար ժա-  
մանակ Արկտիկայում և գտնվում: Հյուսիսից տեղափոխվելով մեր  
տերիտորիան, ողի արկտիկական զանգվածները խիստ ցուրտ են  
բերում: Արկտիկական ողը քիչ ջրային գոլորշիներ և պարունա-  
կում իր մեջ և աչքի յե ընկնում մեծ թափանցիկությամբ: Նա  
դեպի մեզ և հոսում ամենից հաճախ Բարենցեվի և Կարսյան ծո-  
վերից: Այսպիսի ողը կոչվում է կոնտինենտալ արկտիկական ող:  
Զամեռը նրա հոսանքը բարեխառնության խիստ իշեցում և առաջ  
բերում ուժեղ սառնամանիքով, յերբ յերկինքն անամպ և լինում:  
Տարվա տաք ժամանակ արկտիկական ողը, տեղափոխվելով տաք  
յերկրի վրա, համեմատորեն արագ տաքանում ե. նա իր հետ բե-  
րում ե պարզ, չոր, սկզբում զով, իսկ հետո շոգ յեղանակ: Դար-  
նանը և աշնանը արկտիկական կոնտինենտալ ողի պատճառով  
հաճախ գիշերները ցրտեր են լինում:

Հաճախ արկտիկական ող մեզ մոտ գալիս և Գրենլանդիայից և Շպիցբեռգենից: Ծովերի վերևից առաջ անցնելով, այլպիսի ողը բավականին ուժեղ կերպով տաքանում է և հագենում և ջրային գոլորշիներով: Նա կոչվում է ծովային արկտիկական ող:

Ծովային արկտիկական ողը ձմեռը հաճախ մեծ ձյուն է բերում: Հաճախ յերկրի վրա մասամբուղներ են գոյանում կամ շերտավոր ամպեր, փորոնք միապաղադ հավասար ծածկոցով ծածկում են ամբողջ յերկինքը:

Գարնանը և աշնանը, յերբ ծովային արկտիկական ողն ընկառում և ցամաքի վրա, նրանում հաճախ կուտակային ամպեր են կազմում և յերբեմն ել՝ կուտակային-անձրևեր:

Արկտիկական ող Միության յելքուղական մասը կարող է հոսել համարյա ամբողջ տարին: Միայն ամառվա միջին, հունիսի կեսից մինչև ոգոստոսի կեսը, յերբ Արկտիկայում համեմատորեն տաք յեղանակ ե լինում, արկտիկական ող կազմելու համար չկան համապատասխան պայմաններ:

Բներային ողը նույնպես յերկու տեսակի ծագում և ունենում—ծովային և կոնտինենտալ: Ծովային բնեռույթին ողը մեզ մոտ գալիս և Ատլանտիկական ովկիանոսի հյուսիս-արևմտյան կամ հյուսիսային մասից: Ցածի շերտերում նա տաք ե և հագեցած ջրային գոլորշիներով, վերին շերտերում—սառն ե: Զմեռը ծովային բնեռույթին ողի հոսանքին ուղեկցում է բարեխառնության ուժեղ բարձրացում, վորը հաճախ օ՞չից վեր և բարձրանում: Այդ ժամանակ տաքությունը հաճախ տարածվում է Միության ամբողջ յելքուղական մասում մինչև Ռւբալը: Ամառը ծովային բնեռույթին ողի գալու ժամանակ հաճախ կուտակային կմմ կուտակային-անձրևեր ամպեր են յերեան գալիս հորդ անձրևներով և փոթորիկներով: Գիշերները հաճախակի պարզ են լինում:

Կոնֆինենտալ բներային ող գոյանում և սովորաբար ԽՍՀՄ-ի տերիտորիայի վրա: Զմեռն այդ ողը ցածում շատ սառն և լինում: Այդ ժամանակ ամպամածությունը կամ բոլորվին բացակայում ե, կամ լինում ե թույլ շերտավոր ամպերի ձևով—վերև բարձրացած մառախուղի ձևով: Ամառը կոնտինենտալ բնեռույթին ողով բռնված տերիտորիայի վրա պարզ գիշերներ են լինում: Իսկ յերեկը հաճախ կուտակային ամպեր են գոյանում, փորոնք, ուժեղ կերպով ծագալմելով, յերբեմն հեղեղային են գառնում:

Արևադարձային ողը մեզ մոտ ԽՍՀՄ գալիս և սովորաբար կամ Միջերկրական ծովից՝ Բալկանների և Սև ծովի վրայով, կամ

Ղազախստանի և Կասպից ծովի վրայով: Ծովային արևադարձային ողը, վորը գալիս և Միջերկրական ծովից, ուժեղ տաքացած ե և նույնիսկ ձմեռը Նրիմում բարեխառնությունը բարձրացնում է մինչև 12—15<sup>o</sup>: Արևադարձային ծովային ողը հագեցած ե խոնավությամբ և այդ պատճառով նրա հոսանքը ԽՍՀՄ-ի հարավային մասում հոծ ամպամածություն ե առաջ բերում և առատ մթնոլորտային տեղումներ:

Կոնֆինենտալ արևադարձային ողը, վորը գալիս և մերձկառպյան և միջին ասիսկան անսապատճերից, աչքի յե ընկնում մեծ չորությամբ և բարձր ջերմաստիճանով: Նրանում հաճախ շատ մանր, աչքի համար աննկատելի մեծ քանակությամբ փոշի յե գոտիում: Այդ փոշու ներկայությունն ողը դարձնում է քիչ թափանցիկ պղտոր, արել կարմիր և թվում, իսկ յերկինքը մոխրավուն:


Ինչպիսի ծագում ել ունենան ողային զանգվածները, նրա հատկություններն աստիճանաբար փոխվում են: Բնեռային ողը, հարավ մտնելով, այստեղ վերափոխվում է արևադարձայինի. ծովային բնեռույթին ողը, ընկնելով մայր ցամաքի վրա, կոնտինենտալ ողի հատկություններ ե ընդունում:

ՀԱՅԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ ՃԱԿԱԾԵՐԻ ՄԱՍԻՆ: ՏԱՅ ՅԵՎ ՑՈՒՐՑ ՃԱԿԱԾԵՐ

Յեթե միատեսակ ողային զանգվածը վորնե տերիտորիայի բռնում, ապա այդ ամբողջ տերիտորիայի վրա յեղանակը շատ թե քիչ միատեսակ կլինի: Յեթե ողային զանգվածը չի տեղափոխվում, կամ տեղափոխվում ե շատ դանդաղ, ապա տվյալ վայրում մի քանի որվա ընթացքում յեղանակը համարյա անփոփի կմնա: Իսկ յեթե տվյալ տերիտորիայի վրա ուրիշ ողային զանգված ե շարժվում, ապա յեղանակը բոլորովին փոխվում ե: Առանձնապես արագ և խիստ փոխվում ե ողը յերկու ողային զանգվածների միջև յեղած սահմանի վրա: Այդպիսի սահմանը նակատ և կոչվում, Յերկու ողային զանգվածների միջև սահմանը վոչ թե ուղղի վերև ե գնում, այլ շատ մեծ թեքում ունի դեպի ցուրտ ողի կողմը: Ցուրտ ողը սեպաձև մտնում ե տաք ողի տակը: Յեթե տաք ողը, առաջ շարժվելով, հոսում ե ցուրտ ողի վրա, իսկ ցուրտ ողը զանգվազ հետ ե քաշվում, ապա ճակատը կոչվում ե տաք (նկ. 25): Յեթե առաջ ե շաբժվում ողի ցուրտ զանգվածը (նկ. 26), տեղից


հանելով տաք ողբ, ապա այդպիսի զանդվածների միջև ռահմանը կոչվում է ցուրտ ճակատ:

Տաք ողբ, իրեն ավելի թեթև, սահելով սառն ողի վրայից, աստիճանաբար բարձրանում է վերև: Միաժամանակ տաք ողն ընդարձակվում է ու սառում: Նրանից անջատվում են ջրային գո-



Նկ. 25. Տաք ճակատ:

լորշիներ, վորոնք խտանալով, դառնում են աւազեր կազմող մանրագույն կաթիլներ: Մեծ բարձրության վրա (մինչև 10 կիլոմետր) ողն ուժեղ կերպով սառում է, և նրանից անջատվող ջրային գոլորշիները միանդամից դառնում են մանրագույն սառցա-



Նկ. 26. Ցուրտ ողբ:

յին բյուրեղիկներ, վորոնք և կազմում են փետրանման ամպեր: Մի քիչ ավելի ցած նույնպես շատ բարակ ամպեր են գոյանում, վորոնք ամբողջ յերկինքը ծածկում են թափանցիկ հոծ ծածկոցով: Այդ ամպերն ել նույնպես մանրագույն բյուրեղիկներից են բաղկացած և կոչվում են փետրանման-շերտավոր ամպեր:

Փետրանման-շերտավոր ամպերից ցած յերկան են գալիս հաստ ամպեր, վորոնք հավասար մոխրագույն ծածկոցի յեն նմանվում, և նրանց արանքից արել և լուսինը հաղիկ են լուսանցում: Այդպիսի ամպերը կոչվում են բարձր-շերտավոր ամպեր: Ել ավելի ցած գոյանում են հաստ խիտ ամպեր, վորոնք կոչվում են շերտավոր-անձրեաբեր, և վորոնց արանքից արել չի լուսանցում: Այս ամպերից անձրեկ կամ ձյուն է գալիս:

Տաք ճակատի անցնելուց հետո անձրել կամ ձյունը գաղարում են և սկսում է տաքանալ: Տեղումների շերտը տաք ճակատից առաջ հասնում է 300 կիլոմետր լայնության: Տաք ճակատի մոտենալը բնորոշվում է ճնշման աստիճանական անկումով, փետրանման ամպերի յերկան գալով, վորոնց փոխարինում են փետրանման-շերտավոր ամպերը, իսկ հետո շերտավոր և անձրեաբեր ամպերը: Բամին ուժեղանում է, յերեկին շատ մեծ արագության հասնելով, և ճակատի առջևի 300—400 կիլոմետր լայնությամբ շերտից տեղումներ են թափվում: Ճակատի անցնելու ժամանակ քամին փոխում է ուղղությունը  $90^{\circ}$ , պատվելով ըստ ժամացուցիչ սլաքի: Որինակ, հարավային քամին սկզբում փոխվում է հարավարևմտյանի, հետո արևմտյանի: Բարոմետրը դադարում է ընկնելը: Ցուրտ ճակատի անցնելու ժամանակ ցուրտ ողբ և հոսում տաք ողի տակ վոչ թե սուր սեպի ձևով, այլ սի քիչ կլորացած ձևով գեպի ցած: Տեղահան արված տաք ողը յեռանդով բարձրանում է վերև, կազմելով պատռոտված, արագ շարժվող ամպեր, վորոնց արանքից յերկան է յերկինքը: Այսուհետև յերկան են գալիս հաստ ամպեր, վորոնցից թափվում են հորդ տեղումներ, հաճախ ուղեկցվելով փոթորիկներով:


Ճակատն անցնելուց հետո անձրել համարյահանկարծակիութեն կտրվում է, յերկինքը պարզում է, և սկսում է ցրակը:

Ցուրտ ճակատի մոտենալուց առաջ ճնշումն արագորեն ընկնում է, իսկ ճակատի անցնելուց հետո սկսում է արագ բարձրանալ: Բամին բոլորովին փոխում է ուղղությունը և յերեկին մեծ ուժով և փշում: Ցուրտ ճակատի մոտենալուց առաջ յերկան են գալիս սկզբում փետրանման-շերտավոր ամպեր, հետո բարձր-կուտակային, վորոնք փոխվում են շերտավոր-կուտակայինի: Ցուրտ ճակատի անցնելու ժամանակ շերմությունն ընկնում է: Ճնշումն աճում է, քամին ուժովին և դառնում: Տեղումները թափվում են սկզբում տարավի ձևով, իսկ հետո անձրեկ ձևով:

Ճակատի թիկունքում ուստիչ ցրտում է:


## ՑԻԿԼՈՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ: ՀԱԿԱՑԻԿԼՈՆՆԵՐ

Ցերեկի շատերն են դիտել, թե ինչպես են գոյանում ջրապառույտները գետերում: Նրանք գոյանում են այն տեղերում, վորտեղ ջրի հոսանքները շարժվում են տարրեր արագությամբ, կամ գետախորշերում, վորտեղ ջրի հոսանքն արագելքի յե հանդիպում, կամ նույնիսկ հետ ե դառնում հակառակ կողմը:



Ակ. 27. Ցիկլոնի ծագումը:


Աղային դանդվածները նույնական միա-



տեսակ արագությամբ չեն շարժվում և հաճախ պատահում ե, վորովի մի զանգվածը մի ուղղությամբ և շարժվում, մյուսը՝ հակառակ ուղղությամբ: Այն ժամանակ այդ զանգվածների շիման սահմանագծում ճակատի գիծը կրունում է և ալիք և գոյանում: Ողի զանգվածները զուգահեռ շարժման փոխարեն սկսում են շարժվել վորոշ անկյունի տակ (Ակ. 27): Յուրա ողն այդ գեպքում ելի ուժեղ կերպով շուրջ գալիքի հարավ և, տաք ողի տակը հոսելով, նրան մղում և վերե, իսկ տաք ողը շուրջ գալով դեպի հյուսիս, փուլում և նրա առաջից հետ քաշվող սառն ողի վերեւում: Այնտեղ ուր հոսում և տաք ողը, ձնշումն իջնում ե, իսկ այսական, գետի վորը հոսում և սառն ողը, ձնշումը բարձրանում ե: Այսպիս ե գոյանում կենտրոնում իջեցված ձնշումով շրջան: Այդպիսի շրջանը կոչվում ե ցած ձնշման շրջան կամ ցիկլոն:


Յուրա և տաք ողի շարժման սխեման այդպիսի ցիկլոնում ներկայացված ե Ակ. 28:

Ցիկլոնն իր ծագելուց հետո տեղափոխվում ե այն կողմը, ուր հոսում և տաք ողը: Ցիկլոնների շարժման արագությունը շատ բազմազան է: Ցերեկնեն ցիկլոնը համարյա որերով կանչնում ե մի տեղում, յերբեմն որվա ընթացքում տեղափոխվում ե 1000 կիլոմետր: Ցիկլոնի հետ միասին տեղափոխվում են տաք և ցուրտ ճակատները: Բայց ցուրտ ճակատը միշտ արագ և շարժվում տաքից և վրա յե հասնում տաքին: Այդ ժամանակ տաք ողը, վորը գեն և մղվում նրա տակը հոսած ցուրտ ողի կողմից, բարձրանում ե վերև (Ակ. 29), իսկ ներքեւում, յերկրի յերեսի մոտ ցիկլոնը լցվում է, այսինքն ողը նրանում հավասարվում ե: Այդ յերեսութը կոչ-



վում և ոկլյուզիա (ցիլոնի փակում): Ոկլյուզիայից հետո ցիլոնը սովորաբար շարունակում է գոյություն ունենալ՝ դեռ ելի միջանի որ, մինչև վոր նա վերջնականապես չի լցվի: Ցիլոնի թիկունքում հաճախ նոր ցիլոն և կազմվում, իսկ յերկրորդին հետևում է յերրորդը, չորրորդը և ոտացվում են մեկը մյուսին հետևող ցիլոնների մի ամբողջ ընտանիք (նկ. 30):

Ցած ձնշումների շրջանների կամ ցիլոնների միջև գոյանում են բարձր ձնշման շրջաններ, այսպիս կոչված հակացիկլոններ:



Նկ. 30. Ցիլոնների ընտանիք:

Հակացիկլոնները սովորաբար կազմված են լինում խիտ ցուրտ ողի զանգվածից: Այդ ողի ստորին շերտերը տաք ժամանակ, տառացած յերկրի հետ շփվելուց, սովորաբար ուժեղ տաքանում են, և այդ պատճառով, հակացիկլոնները տարվա տաք ժամանակ հաճախ շոգ յեղանակ են բերում: Հնարավոր են նաև արևադարձային ողի զանգվածներից կազմված տաք հակացիկլոններ:


Հակացիկլոնները բնորոշվում են նրանով, վոր նրանցում ամենամեծ ձնշումը նկատվում է կենտրոնական մասում: Այդ պատճառով հակացիկլոններում քամիները փշում են կենտրոնից դեպի հակացիկլոնի ծայրամասերը: Հակացիկլոնները բաղկացած են ողի միապաղաղ զանգվածից: Հակացիկլոններում բաժանման սահմաններ կամ ճակատներ չկան:

Հակացիկլոններն ընդգրկում են յերբեմն ահազին տարածություններ: Այսպես, տարվա ցուրտ ժամանակ Սիրիում գոյանում և ահազին համարյա անշարժ հակացիկլոն, Ասիական մայր ցա-

մաքի կենտրոնական մասի վրա ցուրտ ողի կուտակման պատճառով: Տարվա տաք յեղանակին լայնածավալ հակացիկլոն է կազմվում Աստղանայան ովկիանոսի վերևում, մոտավորապես 30—40<sup>o</sup> հյուսիսային լայնության վրա՝ կենտրոնն Ազորյան կղզիների մոտ, վորի պատճառով ել կոչվում է Ազորյան հակացիկլոն: Բեեռային շրջանի այն կողմում, այնտեղ ողի ցուրտ շերտերի կուտակման հետևանքով, նույնպես բարձր ձնշման շրջաններ են կազմվում: Այդ քիչ շարժուն, ահազին տարածություններ բռնող բարձր ձնշման շրջաններից յերբեմն բարձր ձնշման միջուկներ են անջատվում, վորոնք տեղափոխվում են կամ հյուսիսից գեպի հարքավ, յեթե նրանք բևեռային ծագում ունեն, կամ արևելք, կամ հյուսիս-արևելք՝ յեթե նրանք անջատվում են Ազորյան հակացիկլոնից: Զմեռ ժամանակ յերբեմն ուժգին զարգանում է Սիրիույան հակացիկլոնը, վորի ճյուղավորությունները բռնում են նաև Միության յելլոպական մասը:


### ՅԵՂԱՆԱԿԻ ՑԻԿԼՈՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՀԱԿԱՑԻԿԼՈՆՆԵՐՈՒՄ

Բարձր և ցած ձնշման շրջաններում յեղանակը տարբեր եւ Սա ամենից առաջ կախված է ցիլոններում և հակացիկլոններում



Նկ. 31. Քամիների ուղղությունը ցիլոններում:

վչող քամիների ուղղությունից: Ցիկլոնում քամին փշում և ծայրամասերից դեպի կենտրոն, իսկ հակացիկլոններում—կենտրոնից դեպի ծայրամասերը: Բացի զրանից, քամու ուղղության վրա ազգում և յերկրի շարժումը: Դրա հետևանքով քամին փշում և վոչ թե ուղիղ ողի ձևման պակասացման ուղղությամբ, այլ այդ ուղ-




Նկ. 32. Քամիների ուղղությունը հակացիկլոններում:

պությունից շեղվելով մի քիչ դեպի աջ: Այդ պատճառով քամիները ցիկոններում և հակացիկոններում այնպիսի ուղղություն ունեն, ինչպես ցույց ե տված 31 և 32 նկարներում:

Բամու ուղղությունը և յեղանակի ուրիշ տարրերի — շերմության, ամպամածության, տեղումների գասավորությունը ցույց ե արված ցիկոնի սխեմատիկ ուրվագծումը (նկ. 33): Նրա վրա ցուրտ ողի շարժման ուղղությունը ցույց ե արված անընդհատ սև նետիկներով, իսկ տաք ողի ուղղությունը — կրկնակի նետիկներով: Ստվերագծած շերտը ցույց ե տալիս տեղումները: Նկարից յերեսում ե, վոր տաք ճակատի առաջ ընկած է տեղումների լայն շերտ (մոտ 300 կիլոմետր), իսկ ցուրտ ճակատի հետևում — նեղ շերտ (70 կիլոմետր): Տաք շերտի առաջից շարժվում են զանազան տիպի ամպեր: Ցիկոնում կա տաք վրա

ջան (սեկտոր), վորը սահմանափակված եւ տաք և ցուրտ ճակատ-ների գծերով։ Այդ գծերի յերկու կողմերում դիտվում են ջերմաս-տիճանների նշանակալի տարրերություններ։ Հետեաբար, տաք աեկտորը սահմանափակված եւ մի կողմէոց տաք ալիքով, կորն առաջ



### Նկ. 33. Ցիկլոնի սխեման:

Ա շարժվում տաք ճակատի գծի կողքով և բերում ե հարավային  
քամիներ: Մյուս կողմից նա սահմանափակված և սառն ալիքով  
վորը շարժվում և սառը ճակատի ուղղությամբ և բերում ե հյու-  
սիսային քամիներ:

Ցիկոնի անցնելու ժամանակ ավյալ կետում յեղանակը փոխվում է, վորո սովորաբար կախված է նրանից, թե ցիկոնի վոր մասն է անցնում տվյալ կետով:

Յեթե դիտման տեղով անցնում է ցիկոնի հարավային մասը, ապա ողի փոփոխության մեջ այսպիսի հետեղականությունն է նկատվում: Սկզբում յերեան են գալիս փետրանման ամպեր, վորոնք աչքի համար նկատելի կերպով տեղափոխվում են յերկնքի յերեսով: Այնուհետև յերկնքի յերեսին փոխվում է փետրանման շերտավոր ամպերի բարակ ցանցը: Աստիճանաբար ամպերը խտանում են և դառնում շերտավոր և շերտավոր-անձրևաբեր: Սկսում ե ավելի ու ավելի ուժեղացող անձրև կամ ձյուն գալ: Եերտավոր-անձրևաբեր ամպերի դոտին սովորաբար ընդգրկում է անձրեկ գլանքում մոտավորապես 300 կիլոմետր և ձյան գեալքում մոտավորապես 400 կիլոմետր: Այդ ժամանակ բարումները շարունակ աստիճանաբար ընկնում ե: Քամու ուղղությունը փոխվում է ըստ ժամացույցի սլաքի, այսինքն, յեթե սկզբում արևելյան քամեր, հետո նա աստիճանաբար դառնում է հարավ-արևելյան, հարավ-հարավ-արևելյան, հարավային, հարավ-հարավ-արևմայան և այլն: Ավելանում է քամու արագությունը:

Տաք ճակատի անցնելու ժամանակ քամու ուղղությունը միանգամից փոխվում է, ըստ վորի քամին յերբեմն դառնում է ուժովին և պոռթկուն, փոխվելով փոթորկի: Այնուհետև հաստատվում է սովորաբար բավականին պարզ և տաք յեղանակ: Բարումներն ընկնելիս վորոշ չափով դանդաղելուց հետո տաք սեկտորի շրջանում հավասար ընթացք և ընդունում, և յեթե բարձրանում է, ապա շատ դանդաղ:

Ցուրտ ճակատի մոտենալու ժամանակ յերեան են գալիս բարձր-կուտակային և բարձր-շերտավոր ամպեր, վորոնք դառնում են կուտակային-անձրևաբեր: Բարումներն սկզբում թուիչը և դործում գեպի ներքեւ, իսկ հետո անընդհատ հավասարաչափ բարձրանում ե: Քամին փոխում ե իր ուղղությունը և համարյա հակառակ ուղղություն և ընդունում, դառնում է հյուսիս-արևմտյան և պոռթկուն: Ողի ջերմաստիճանը միանգամից ընկնում է: Կուտակային-անձրևաբեր ամպերից հեղեղի տեսակի անձրև և թափիվում:


Յեթե ցիկոնի կենտրոնն այն կետից հարավ և անցնում, վորտեղ դիտողն է գտնվում և, հետեւաբար, այդ կետով ցիկոնի հյուսիսային մասն և անցնում, ապա յեղանակի փոփոխությունը հետեւակայի կերպ է կատարվում:

Վոր ամպերը, վորոնք ավելի ու ավելի ցած են իջնում: Ցիկոնի կենտրոնական մասին մոտիկ թեթև անձրև և սկսվում: Նա աստիճանաբար ուժեղանում է: Ցիկոնի արևմտյան մասում անձրեւ բարվականին հաճախ դադարում է: Ամպերը դառնում են բարձր-շերտավոր և բարձր-կուտակային: Բայց ցիկոնի անցնում ժամանակ տաքացում չի նկատվի: Անձրեւ կամ ձյան կտրվելուց հետո նույնիսկ կարող ե ցրտել, վորովհետև ցիկոնի տվյալ մասում ցուրտ քամիներ կիչեն՝ հյուսիսային կամ հյուսիս-արևմտյան ուղղությամբ:

ԽՍՀՄ-ի տերիտորիայով ցիկոնները շարժվում են սովորաբար արևմուտքից գեպի արևելք կամ հյուսիս-արևմուտքից գեպի հարավ արևելք (նկ. 34): Ցիկոնները գեպի մեզ են գալիս ամենից հաճախ Ատլանտյան ովկիանոսից և, նախքան մեզ մոտ հասնելը, անցնում են Արևմտյան Յելլուպայով, վորի համար պահանջվում է 2-3 որ: Սակայ են գալիս ցիկոնները հարավից—Միջերկրական կամ Սև ծովերից և այն ժամանակ նրանք շարժվում են գեպի հյուսիս: Քարտեզի վրա (նկ. 34) գծված են այն ճանապարհները, վորոնցով ավելի հաճախ են անցնում ցիկոնները: Սակայն յուրաքանչյուր առանձին ցիկոնի ճանապարհն այնքան բարդ է, վոր հաճախ անհնարին և լինում ասել թե որ և նա այնուհետև գնալու:

Ճակացիկոննում քամին փչում և կենտրոնից գեպի ծայրամասերը, այսինքն ողը հակացիկոնի միջին մասից ցրվում և բռյուր կողմերը: Կենտրոնի ողի պակասը լրացվում և ողի այն զանգվածով, վորը հոսում և վերին շերտերում գեպի հակացիկոնի կենտրոնական մասը և զանգաղ իջնում և ցած: Իջնելիս ողը սեղմափում է, նրա ջերմաստիճանը բարձրանում է, իսկ հարաբերական խոնավությունը պակասում է: Այդ պատճառով հակացիկոնները քնորոշ են սովորաբար պարզ անամպ յերկնաքով: Հակացիկոնական յեղանակին արևի ճառագայթներն ուժգին տաքացնում են յերկրի յերեսը, իսկ տաքացած ողից տաքանում են ողի սահմանակից շերտերը: Ողի վերին շերտերը հակացիկոնում այդ ժամանակ մնում են սառը և չոր:

Յեթե հակացիկոնը մի տեղում յերկար և կանգնում կամ դանդաղ և տեղափոխվում, ապա ողի ստորին շերտերը նրանում կարողանում են ուժգին տաքանակ և սկսվում է չոր, շոգ յեղանակ: Բայց նույնիսկ ամառն ել հակացիկոնի ժամանակ գիշերները համեմատորն ցուրտ և լինում, վորովհետև ամպերի բա-



Черт. 34. Время и направление движения Чикагово

ցակայության և ուժեղ ճառագայթման հետեւանքով հողի և բռնական ծածկոցի մակերեսային շերտը գիշերը կարողանում է ուժեղ սառել ջմու ժամանակ չերպության կորուստը գիշերային ճառագայթման միջոցով ավելի շատ և, քան արելց ստացած տաքությունը ձմռան կարճ որվա ընթացքում: Այս պատճառով հակացիկոնի ժամանակ սովորաբար կայուն սառնամանիքի յեղանակ և լինում: Վորքան հակացիկոնը կայուն և, վորքան ավելի յերկար և կանգնում միևնույն տեղում, այնքան ուժեղ և նուսառում, այնքան ուժեղ ևն լինում սառնամանիքները:

Մեզ մոտ ամենից ավելի ուժեղ ցրտեր դիտվում են Սրբելան Սիրիբում, վորտեղ ձմռու մի քանի ամիսների ընթացքում հակացիկոն և լինում, և վորտեղ սառնամանիքը համար է իր ծայրահեղ տատիճանին: Յակուտիայում մինչև 50—60 աստիճան սառնամանիքները հազվագյուտ չեն, իսկ բացառիկ դեպքերում ել ավելի խիստ են լինում (վերխոյանսկում նշանակված է յեղել 68° սառնամանիք):

Բարձր ճնշման շրջանները, կամ հակացիկոնները, սովորաբար մի տեղում չեն կանգնում, այլ տեղափոխվում են: Ճիշտ և, գոյություն ունեն անշարժ հակացիկոններ, ինչպես Սիրիբինը, վորը մի քանի ամսով կանդ և առնում Սիրիբի վրա, Ազորյանը—Ասլանտիկ ովկիանոսի վրա, կամ անդրբեռոյային հակացիկոնները: Բարձր ճնշման այդ անշարժ շրջաններից ժամանակ առ ժամանակ անշատվում են փոքր չափերի հակացիկոններ—բարձր ճնշման միջաւկներ: Այդ հակացիկոններն իջնում են կամ ըևեռային գոտու հետեւ կամ արևմուտքից—Աւալանտյան ովկիանոսից, կամ արևելքից, անջատվելով Սիրիբյան հակացիկոնից, կամ, վերջապես, արևելքից, վորը պատահում է տարվա ցուրտ ժամանակ, յերբ Սիրիբյան հակացիկոնն ուժեղանում է և նրա ճյուղավորությունը մտնում է Միության յելլոպական մասը:

Հակացիկոնները սովորաբար ավելի դանդաղ են շարժվում, քան ցիկոնները:

### ԱՄՊԵՐԸ ՑԵՎ ՆԻՍՆՑ ԾԱԳՈՒՄԸ: ՏԵՂՈՒՄՆԵՐ

Ցիկոններում ամպերի յերեան գալը բացատրվում է հիմնականում ուղղահայց բարձրացող ոդային զանգվածների սառելով: Որինակ, յերբ տաք ոդային զանգվածը հոսում է սառն ոդային զանգվածի վրա, տաք ոդը վեր և բարձրանում և նրանում ամ-

պեր են կազմվում: Տաք ողի զանգվածների սաւն ողի զանգվածների հետ շփման սահմանադրում ավելի թեթև ողը գեն և մղվում սառց ծանը ողի կողմից և վեր և բարձրանում: Բարձրանալով, տաք ողն ընդարձակվում է, սառում և նրանում սկսում են խտանալ ջրային գորշչներ, վորոնք ամպեր են կազմում. ալելի բարձը շերտերում—փետրանման, ապա փետրանման-շերտավոր և առողջին շերտերում—շերտավոր և անձրևաբեր:

Վերև բարձրացող հոսանքների ամպերի, այսպես կըչված կուտակային ամպերի, յերեան գալը յուրաքանչյուրը կարող է դիմուլ տարվա տարք ժամանակ:


Ամառային տաք առավոտայան յերկնքում յերբեմն վոչ մի ամպ չի լինում: Արևի ճառագայթներն սկսում են տաքացնել յերշկիրը, իսկ նրա հետ շվիզելուց տաքանում են և ողի ստորին շերտերը: Տաքացած ողն ընդարձակվում է, ավելի թեթև և դառնում և մանր հոսանքներով բարձրանում և վերև: Շոգ որը դաշտում հեղտությամբ կարելի յե նկատել, թե ինչպես յերկրի յերեսի մոտ ողը դողում եռ հոսում: Վեր բարձրանալով, այդ տաք, խոնավ ողն աստիճանաբար սառում է: Նրա մեջ գտնված ջրային գոլորշիների ավելցուկն սկսում է խտանալ և դառնում և մանրագույն կաթիլներ: Կազմվում են կուտակային ամպեր, փորոնք իրենց ձեփով հիշեցնում են ձյան սարեր: Որպա յերկրորդ կեսին, յերբ ողի վերին շերտերն ել արդեն տաքանում են, այդ ամպերն սկսում են գոլորշիանալ և իրեկվա գեմ անհայտանում են:

Ցեղի ամպի մեջ գոյացած մանրագույն կաթիլսերը շարունակում են խտանալ և աճել, ապա նրանք կարող են այնքան խոյրանալ, վոր թափվում են անձրևի ձևով:

Յեթե ողի վերին շերտերում ջերմաստիճանը 0<sup>0</sup> ցած է, ապա  
ջրային գոլորշիները, խտանալով, դառնում են ուղիղ վեցանիս-  
տի-վեցանիստ պրիզմաների կամ վեցանիստ թերթիկների ձևի  
ամուր սառցե բյուրեղիկներ։ Վեցանիստ բյուրեղի անկյուններում  
ջրային գոլորշիներ են նստում, կազմելով ճառագայթներ, վորոնց  
վրա իրենց հերթին գոյանում են ճյուղավորություններ և այդ-  
պիսով ստացվում են ձյան բարդ փաթիլ (նկ. 35)։ Տաք յեղանա-  
կին առանձին փաթիլները կպչում են իրար ողում գտնված կա-  
թիյների միջնորդ, կազմելով մեծ-մեծ փաթիլներ։

Օ՞ ցած ջերմաստիճանի ժամանակ ողի ուժեղ գերհազեցման  
դեպքում բյուբեղիկները հիմնական բյուրեղի վրա շատ ինտեն-  
սիվ կերպով են նստում, և այդ ժամանակ կազմվում ե մանրա-

Ալարկուտ, վորը նման ե կաթի գույշնի անկանոն ձևի մանը սիսե-  
ռի հատիկներից: Մանրակարկուտ գալիս ե զվարապես զարդա-  
նը (մարտին և տպրիլին), յերբեմն նաև մայիսին, յերբ ցուբուլ-  
էիրադառնում ե. մանրակարկուտը սակավ ե լինում աշնանը: Ման-



### Նկ. 35. Զյան փաթիլների ձևերը

բակարկուտը սովորաբար գոյանում և այն ժամանակ, յերբ հողը  
տաքացած և և ոդի ստորին շերտերը 0°-ից բարձր ջերմություն  
ունեն, իսկ հողից քիչ բարձր ոդի ջերմաստիճանը 0° ցածր է:

ԿԱՐԿՈՒՏՅԱՆ ԱՄՊՐՈՎ



Հաճախ լոգաբնանը և ամառը, իսկ յերբեմն նաև աշնանը կար-  
կուտ և գալիս, վորը գյուղատնտեսությանը մեծ վնաս և հասցնում:  
Այն վայրերում, վորտեղ կիման տաք և, կարկուտ հաճախակի յե-  
գալիս. նա գոյանում և այն ժամանակ, յերբ ողի ստորին շերտը,  
կպած կպած և յերկրին, ուժգին տաքացած և և իր մեջ մեծ քա-  
վորը կպած յերկրին գորոշիներ և պարունակում, իսկ ողի վերին

շերտերը զգալի չափով սառն են ցածրի շերտերից: Վորքան վորմեծ և տարբերությունն ողի վերին և ստորին շերտերի ջերմաստիճանների միջև, այնքան ավելի արագորեն է բարձրանում վերև տաք ողը: Հաս վորի, ողի ստորին տաք շերտում գոլորշիների ձևով պարունակված խոնավությունը ողի վերև բարձրանալու հետ անջատվում է մանր կաթիլների ձևով: Այդ կաթիլները, վորոնք ողային հոսանքի հետ վերև են գնում, շարունակում են սառել 0° ցած առանց սառույց գառնալու: Զրի այդպիսի վիճակը կոչվում է գերսասում: Յեթե գերսառած կաթիլը բաղավում է սառցե բյուրեղի հետ, իսկ այդպիսի բյուրեղներ շատ կան ողի վերին շերտերում, յերբ այնտեղ փետրանման ամպեր կան,—կաթիլը միանգամից սառում է: Բաղավելով ուրիշ կաթիլների հետ, նա շարունակ մեծանում է և, վերջապես, այնքան և ծանրանում, վոր ընկնում և յերկրի վրա:

Կարկտի հատիկները սովորաբար գնդառնելու համ ձվածե են լինում (նկ. 36): Կարկտի հատիկի ներսում կարելի յի դիտել փայլատ միջուկ, վորը վերեից ծածկված և թափանցիկ կեղուվ: Կարկտի հատիկների մեծությունը շատ բազմազան է լինում—սիսեռք փոքրիկ հատիկից սկսած մինչև խոշոր ծուն, իսկ յերբեմն ելավելի մեծ: Ողում թոշելու ժամանակ յերբեմն մեկը համանում ե մյուսին և մի քանի հատ սառչելով կպնում են իրար: Այս պատճառով ավելի խոշորները ճիշտ են չունեն:

Յեղել ե գեպք, յերբ կարկտի հատիկի քաշը հասել ե 2 կիլոգրամի, 25 սանտիմետր յերկարությամբ, 14 սանտիմետր լայնությամբ և 12 սանտիմետր հաստությամբ:

Ուժեղ կարկտահարություն տեղի ունեցավ Ողեսայում և նրա շրջակայքում 1932 թ. մայիսի 9-ին: Կարկտի հատիկների մեծությունն աղավնու ձվի չափոց հասնում եր մինչև բռունցքի ափի, ափսեյի, նույնիսկ աղյուսի մեծության: Առանձին կտորների մեծությունը հասնում եր յերկարությամբ 12, լայնությամբ 8 և հաստությամբ 3 սանտիմետրի: Ծանրությունը տատանվում եր 240—300-ից մինչև 700 գրամ, իսկ մի գելքում մինչև 1400 գրամ: Կարկտի հատիկների ձևերը նույնպես շատ բազմազան եյին: Աղատահում եյին հավի ձվի ձեի հատիկներ, թերթաքարերի, սառույցի անորոշ կտորների, փշերով սառցակտորների, հաշիայով կամ վարդազարդով ափսեների ձևով: Կարկուտը քաղաքի գանազան մաս երում տեսն 10-ից մինչև 15 բոպե: Կարկտի հատիկների անկման ուժն այնքան մեծ եր, վոր վոչ միայն կրկնակի փեղկե-



Նկ. 36. Կարկտի ձևերը:

քի ապակիները փշրվեցին, այլև կոտրվեցին ծառերի յերկու մատի հաստության ճյուղերը, ծակվեցին յերկաթյա կտուրները, իսկ վորոշ տեղերում քանդվեց մտրաւելան կղմինդրը։ Կարկտի շերտի հաստությունն առանձնապես մեծ չեր. շատ շրջաններում հողը նույնիսկ ամբողջովին ծածկված չեր կարկուտով։

Կարկուտը տեղում և առանձին տեսակի ամպերից, վորոնք կոչվում են կարկտարեր ամպեր։ Կարկտարեր ամպերը կազմվում են հաճախ կուտակային ամպերից, վորոնք մնանում են խորությամբ և բարձրությամբ։ Սովորաբար կարկուտը նեղ շերտով ե անցնում, մեկ-յերկու կիլոմետր լայնությամբ, իսկ շերտը շատ թե քիչ զգալի յերկայնություն և ունենում է նւստի հաճախ կարեցի յե տեսնել, վոր համարյա կարկտահար յեղած ցանքերի կողքին կան բոլորովին չվնասված ցանքեր։

Մեր յերկուում կան այնպիսի վայրեր, վորոնք շատ հաճախ են յենթարկվում կարկտահարման։ Այդպիսի վայրեր հանդիպում են կովկասում։ Սրանք տաք և բուսականությամբ հարուստ հովիտները և սարալանջերն են։ Միության տափարակային մասում կարկտահարության հաճախ են յենթարկվում Ուկրաինայի արևմրտյան և կենտրոնական մասերը և կուրսկի ու Վորոնեժի մարզերի արևելյան մասը։


Կարկտին սովորաբար ուղեկցում են ուժեղ անձրես և ամպրոպը—կայծակը և վորոտը։ Ամպրոպը հաճախ ե լինում և առանց կարկտի։

Մթնոլորտում միշտ ելեկտրականություն կա։ Յեթե հողը և ամպը կամ յերկու առանձին ամպերն ելեկտրականացած են զրականով և բացասականով, ապա նըանց մեջ ելեկտրապարպում ե կատարվում, կայծ և թոշում։ Հենց սա ել կայծակն ե։ Ողի ցընցումը, վորը կատարվում և այդ ժամանակ, կոչվում ե վորոտ։

Սկզբում մենք տեսնում ենք կայծակը, իսկ մի քանի վայրկյանից հետո լսում ենք վորոտի դղրդյունը, թեեւ այդ յերեսոյթները միաժամանակ են կատարվում։ Իսկ այդպես ե լինում այն պատճառով, վոր լույսը վարկենապես և տարածվում, և կայծակը մենք տեսնում ենք նույն մոմենտին, յերբ ելեկտրապարպում ե կատարվում։ Իսկ ձայնն ողում տարածվում և միայն մոտավորապես 330 մետր արագությամբ մի վայրկյանում։ Վորքան մոտ և տմպրոպը մեզանից, այնքան փոքր և կայծակի ու վորոտի միջև ժամանակամիջոցը։ Յեթե ժամացույցի վրա նկատել, թե քանի վայրկյան և անցնում կայծակի ու վորոտի միջև, ապա հեշտ կարելի յե վորոշել, թե մեզանից ինչ տարածության վրա տեղի ու-

նեցավ ամպրոպը։ Դրա համար պետք է 330 մետրը բազմապատկել վայրկյանների այն թվով, վորոնք անցել են կայծակի յերեվալու մոմենտից մինչև վորոտի ձայնը լսելու մոմենտը։

Կայծակը սովորաբար մեզ զիգզագանման և թվում, իսկ կայծակի լուսանկարները ցույց են տալիս, վոր կայծակները սովորաբար շատ վտակներ ունեցող հոսող գետի տեսքը ունեն (նկ. 37)։



Նկ. 37. Կայծակի նկարը։

Այդպիսի կայծակները կոչվում են գծային։ Կայծակի ուրիշ ձեերը ել են նկատվում—ճապաղ, գնդաձև, հատիկային։

Ճապաղ կայծակը լայն ելեկտրոպարպ ե, վորն ընդգրկում ե ամպերի նշանակալի մասը։ Հաճախ այսպիսի կայծակի հետ վորոտը չի լինում, սա այսպես կոչված փայլակն ե։

Գնդաձև կայծակը սակավ ե նկատվում։ Նա մերթ բռունքքի, մերթ գլխի մեծության լուսատու գունդ ե ներկայացնում։ Այսպիսի գունդը սովորաբար ողի միջով դանդաղ ե շարժվում։ Գնդաձև կայծակը յերեմն ներս ե մոտում շենքի մեջ ծիններույղով, բաց լուսամուտից կամ դռնից։ Յերեմն նա անհետանում է անազմուկ, յերեմն պայմանական դաշտում և ուժեղ շրիփուց։ Գնդաձև կայծակի յերեմն դաշտում կայծակի վրա կատարել, թե քանի վայրկյան և անցնում կայծակի ու վորոտի միջև, ապա հեշտ կարելի յե վորոշել, թե մեզանից ինչ տարածության վրա տեղի ու-

Նի յե Քիզիկոս Որիսմանի հետ պատահած տխուր գեպքը, վորն սպանվեց գնդաձև կայծակից մթնոլորտային ելեկտրականության չափումների փորձն անցկացնելու ժամանակ:

Ծիխմանը տան կտրից իր առանձնասենյակն անցկացրեց մթնոլորտային ելեկտրականություն անցկացնող մնկուսացված յերկաթյա ձող, վորի լարվածությունը Ծիխմանը չափում եր: 1753 թ. ոգոսառոսի 6-ին ուժգին ամպրոպի ժամանակ նա կանգնած եր ձողից վոչ հեռու, խուսափելով խոշոր կայծերից և չափելու համար հարմար մոմենտի սպասելով: Այդ ժամանակ ներս մտավ նրա փորագրողը: Դեպի նրան մի քանի հանդիպական քայլ անելով, Ծիխմանը չափազանց մոտեցավ հաղորդչին: Վերջինից գուրուս պրծալ մի կապտավուն կրակի գունդ, խփեց գիտնականի ճակատին և տեղնուտեղն սպանեց նրան:

Գնդաձև կայծակի հետաքրքիր մի գեպք դիտվում եր կրասնի կորդոն ողերեւութարանական կայանի տերիտորիայի վրա: «1935 թ. ոգոսառոսի 2-ին մոտավորապես ժամը 17-ին կրասնի կորդոն ողերեւութարանական կայանի տերիտորիայի վերեկց մի ուժգին փոթորիկ անցավ, վորը ցած գլորեց հարյուրամյա կաղնիները, շատ կտուրներ պոկեց, տարալ և կուրեց հողմազացի թևերը»:

Փոթորկից հետո պայթեց ուժգին ամպրոպը տարափով: Կայծակի հարվածներից մնկով հողմազացի թևերը կապող շղթան դուրս թռավ ցածի թերեց: Սրա հետ միաժամանակ 15—20 սանտիմետր տրամագծով հրագունդն արագ ներս գլորվեց աղացի բաց գոնից: Գունդը վարկենապես գլորվեց արկղի նման փակ նստարանի տակ և կանգ առավ: Զաղացպանն անշարժ հրագունդը հըրդեհի տեղ ընդունեց և մի փոքր տախտակով մի քանի անգամ խփելով գնդին, արագ հանգցրեց կրակը, վորից միայն այնպիսի հոտ մնաց, ինչպես վոռողի ծխից»:

Գնդաձև կայծակների բնույթը գեռ բավականաչափ ուսումնասիրված չէ: Գիտնականների կարծիքով գնդաձև կայծակը բաղկացած և շիկացած բացասական ելեկտրական գազերից, գլխավորապես աղոստից ողոնից:

Կայծակի ամենից սակավ պատահող ձեր հաշվիչային կայծակն ե: Այդ կայծակը բաղկացած և մի շարք լուսատու գնդիկներից, վորոնք իրարից բաժանված են և նման են շարված հաշվիչների կամ մարդկարիտի:

Ամպրոպներ նկատվում են սովորաբար տարվա տաքաւում:

«Տակին: Ըստ գոյացման բնույթի տարբերում են տեղական ծառակում ունեցող, այսպիս կոչվող տաք ամպրոպներ և ճակատային ամպրոպներ»:

Տաք ամպրոպների գոյացման հտմար սետք ե վոր տվյալ վայրում բավականաչափ տաքություն լինի: Այդպիսի ամպրոպները գլխավորապես կեսորից հետո յեն լինում, կամ յերեկոյան և գիշերը: Նրանց գոյացման վրա կարող ե ազդեցություն ունենալ տեղի ուելեփը: Ամենից հաճախ նրանք գոյանում են այնտեղ, վորտեղ փոքր բարձունքներ կան, լճերի կողքին, ճահճներին մոտիկ, այսինքն այնտեղ, վորտեղ տաք խոնավ ողի բարձրացող հոսանքների համար բարենպաստ պայմաններ կան: Վորպեսզի այդ տաքացած ողը կարողանաւ բարձրանալ վերև, անհրաժեշտ և ավելի պաղ ողի հոսանքը: Տաք տեսակի ամպրոպի մոտեցման նշան կարող ե ծառայել բարձր-կուտակային ամպերի յերևալը: Յեթե այդպիսի ամպերը յերևան վաղ առավոտյան, կեսորից հետո կարելի յե ամպրոպ սպասել:

Ճակատային ամպրոպներ կարող են դիտվել յերեմն նույնիսկ ձմեռը: Նրանք գոյանում են ցիկլոնի յեզրային մասում: Այդ տեսակի ամպրոպներ սովորաբար միաժամանակ դիտվում են այնպիսի նեղ շերտում, վորը ցիկլոնի հետ միասին տեղափոխվում և արեմուտքից գեպի արեելը: Ամպրոպային գծի առջևից սովորաբար շարժվում են փետրանման և փետրանման-շերտավոր ամպեր, վորոնք յերեմն ամպրոպից առաջ են ընկնում մի քանի ժամով:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱՏՈՐՈՒՄ ՅԵՂԱՆԱԿԻ ԿԱՆԱԲՐՈՇՈՒՄԸ  
ՍԻՆԱՊՏԻԿԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ

ԻՆՉ ԲԱՆ Ե ՍԻՆՈՊՏԻԿԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ ՅԵՎ. ԻՆՉՊԵՍ Ե ՆԱ.  
ԿԱՐՄՎՈՒՄ

1854 թ. նոյեմբերի 14-ին սուս-թյուրքական պատերազմից ժամանակ, յերբ Քրանսիացիների ու անգլիացիների դաշնակից զորքը պաշարել եր Սևաստոպոլը, իսկ դաշնակիցների նավատօրմիղը Սևաստոպոլի մոտ եր գտնվում, ուժեղ փոթորիկ տեղաց: Այդ փոթորիկ սաստիկ տուժեց դաշնակիցների նավատօրմիղը: Փոթորիկ վոչ վոք չեր սպասում, վորովհետև այնպիսի «յեղանակի ծառայություններ», վորոնք յեղանակի սխտեմատիկ դիտողություններ են կատարում և յեղանակի մոտիկ ժամանակների կանխորոշումներ են տալիս, դեռ վոչ մի տեղ չկար: Ռւսումնասիրերով փոթորիկ առաջացման պատճառները, Քրանսիական հայտնի աստղաբաշխ Լեվերյեն հանգեց այն յեղբակացության, վոր այդ փոթորիկը Դրիմ եր յեկել հեռու արևմուտքից հսպանիայի և Բալկանյան թերակղու վրայով: Յեթե այն ժամանակ յեղանակի մշտական դիտումներ կատարվեյին, ապա կարելի կլիներ վաղութոք նախազգուշացնել նավատորմիղն առաջիկա սպառնալիքից:

Դրանից հետո Լեվերյեյին շուտով հաջողվեց համոզել Քրանսիական կառավարությանն առաջին պետական յեղանակի ծառայություն կազմակերպել:

Յերբ յերման յեկալ հեռագրական ցանցը, յեղանակի ծառայություններ կազմակերպվեցին նաև ուրիշ յերկրներում: Թուաստանում հատուկ ծառայությունը 1872 թվից սկսեց յեղանակի քարտեզներ բաց թողնել:

Վորակազի նախատեսել, թե վաղը տվյալ կետում ինչպիսի յեղանակ է լինելու, ամենից առաջ պետք է իմանալ թե ինչպիսի յեղանակ է այսոր հարեան մարզերում: Մեղ մոտ յեղանակի կենարունական ինստիտուտը Մոսկվայում, նույնպես և տեղական,

հանրապետական և յերկրայինները կամ մի շարք հանրապետական և մարզային քաղաքների մարզային բյուրոններն ողերեւթաբանական կայաններից, դիտումներ կատարելուց հետո (առավայրացիներից ժամանակ ժամանակակիցներից), հեռագրեր են ստանում: Այդ հեռագրերում ցույց ե տրվում բարումնաբական ճնշման մեծությունը, ողի ջերմաստիճանը, քամու ուղղությունն ու ուժը և ուրիշ ողերեւթաբանական տվյալները: Կարճառոտության համար այդ հեռագրերը ընդունված են պայմանական կրծատված նշումներ: Հեռագրերը վերծանվում են և այնտեղից տվյալներն անցկացվում են աշխարհագրական քարտեզի վրա, վորն այսպես են անում: Աշխարհագրական քարտեզի վրա փոքր շրջանիկներով նշանակված են այն կայանները, վորոնցից ստացվում են հեռագրերը: Յուրաքանչյուր շրջանիկի մոտ թվերով մի շարք ողերեւթաբանական մեծություններ են նշանակվում, այն ե.

1. Ծովի մակերեւությն բերած և միլիբարներով արտահայտած ողի ճնշումը (1000 միլիբար ճնշումը հավասար է 750,1 միլիմետրի: 760 միլիմետր ճնշումը, կամ այսպես կոչվող նորմալ ճնշումը, հավասար է 1013,3 միլիբարի):

2. Ճնշման փոփոխությունը վերջին 3 ժամկա ընթացքում:

3. Ողի ջերմաստիճանը:

4. Քամու ուղղությունը և արագությունը թոփորտի բալերով:

5. Տեսանելի հորիզոնի ամպամածությունը տասներարդական մասերով:

6. Ընթացիկ յեղանակի պայմանական բնութագիրը:

7. Յեղանակի վիճակը դիտումների ժամկետների միջև:

8. Ցածի, միջին և բարձր հարկերի ամպերը:

9. Ամպի ցած սահմանագծի բարձրությունը:

10. Յերեկվա մաքսիմալ (յերեկոյան քարտեզի վրա) և գիշերվա մինիմալ (առավոտյան քարտեզի վրա) ողի ջերմաստիճանը:

11. Կես որվա ընթացքում թափված տեղումների քանակը՝ առավոտյան և յերեկոյան քարտեզների վրա:

Այս տվյալներն անց են կացնում շրջանիկի մոտ, վորը քարտեզի վրա ցույց է տալիս ողերեւթաբանական կայանի գիրքը: Երջանիկն ստվերագծում է ամպերի ընդհանուր քանակի համապատասխան: Քամու ուղղությունը ճնշում է նետիկով, վորն ուղղված է դեպի կայանի կողմը համապատասխան նրան, թե վորե-

զից ե փչում քամին. Քամու տրագությունը նշվում է գծիկների քանակով նետիկի մոտ. յուրաքանչյուր յերկար գծիկը համապատասխանում է Բօֆորտի ցուցակի յերկու բալին, իսկ կարճը՝ մի բալի: Յեղանակի առանձին տարրերը նշվում են թվերով և պայմանական նշաններով, վորոնք դասավորվում են շրջանիկի նկատմամբ վորոշակի տեղերում:



Ցույց տված անլյաներն անցկացնելուց հետո քարտեղի վրա գծեր են քաշվում, վորոնք միացնում են այն կետերը, ուր տվյալ ժամկետում մթնոլորտային ճնշումը միատեսակ եր: Այդպիսի գծերը կոչվում են խորաբներ: Քարտեղի վրա այդպիսի գծեր գծում են ամեն մի 5 միլիլուստից հետո: Բացի գրանից, հատուկ պայմանական գծերով քարտեղի վրա նշում են տաք և ցուրտ ճակատները, իսկ այն շերտերը, ուր տեղումներ են թափվել, ստվերագծում են:


Այդպիսի քարտեզը կոչվում է սինոպտիկական (համատեսական) քարտեղ կամ յեղանակի քարտեղ (նկ. 38 և 39): Հետեաբար, յեղանակի քարտեզը Յելլոպայի, Ասիայի մեծ տարածության վրա վորոշ որում և ժամկետում յեղանակի վիճակի կատարված դիտումի պայմանական նշումն է, իսկ մեծ քարտեզների վրա—նաև ամբողջ հյուսացային կիսագնդի վրա կատարած դիտումների նշումները:

Յեղանակի քարտեզները դիտելով, կարելի յե համարյա յուշաքանչյուր քարտեզի վրա հայտաբերել յերկու տիպի ինքնամփոփի իզոքարական շրջաններ: Այն շրջանը, վորտեղ կենտրոնում ճնշումը ցած է, իսկ յեզրերում մեծանում է, կոչվում և ցած ճնշման շրջան կամ ցիկլոն, իսկ այն շրջանը, վորտեղ մեջտեղում ճնշումը քարձր է, իսկ յեզրերում պակասում է, կոչվում և բարձր ճընշման շրջան կամ հակացիկլոն:

## ԵԵՂԱՆԱԿԻ ԿԱՆԽՈՐՈՇՈՒԽԸ

Ունենալով մի քանի որվա իրար հաջորդող յեղանակի քար-  
տեղ և համեմատելով նրանց իրար հետ, կարելի յէ նկատել, վոր  
յեղանակի քարտեզը յուրաքանչյուր որ փոխվում է: Տեղափոխ-  
վում են տաք և ցուրտ ողի զանգվածները: Տեղափոխվում են ճա-  
կատները, փոխվում են ցիկլոնների և հակացիկլոնների դիրքն ու  
ձևը: Յուրաքանչյուր առանձին կետում ողի բարեխառնության,  
ճնշման, թափած աեղումների քանակության և այլ ողերեւութա-





Ֆլուտ Արմենիական քաղաքացիություն:

Ե առողջ ցորոց և առավելա բարձր հիգիենա  
աշխանը (հակոցիկուն), հա-ցած ճնշման շլք-  
շան (ցիկուն),  
Առանձիակոր գծերը—ստամիկերի ուղղու-  
թյամբ շարժվող ճականներ (ողովլին դանդ-  
կածների բաժանման գծեր),  
առաջ ճական

— ցուլս ճական

— ոկուլյուզիայի ճական (միա-  
կցված տաք և ցուլս ճականներ):  
Համեմատելով այստեղ թերած 1936 թվականին անպահպահելի 2-ի և 3-ի սինուպուլյական քարտեզի, ընթերցողը, քարտեզների վրա արած նշումներով՝ կեղանակի հանուններու յերական կառագունակ յերակի փոփոխությունները և այդ փոփոխությունների ընտալիքը մի որովայ ընթաց-  
քում աշխարհագրական զանազան կետերում:

Ե առողջ ցորոց և առավելա բարձր հիգիենա  
աշխանը (հակոցիկուն), հա-ցած ճնշման շլք-  
շան (ցիկուն),  
Առանձիակոր գծերը—ստամիկերի ուղղու-  
թյամբ շարժվող ճականներ (ողովլին դանդ-  
կածների բաժանման գծեր),  
առաջ ճական

— ցուլս ճական

— ոկուլյուզիայի ճական (միա-  
կցված տաք և ցուլս ճականներ):  
Համեմատելով այստեղ թերած 1936 թվականին անպահպահելի 2-ի և 3-ի սինուպուլյական քարտեզի, ընթերցողը, քարտեզների վրա արած նշումներու յերական կառագունակ յերակի փոփոխությունները և այդ փոփոխությունների ընտալիքը մի որովայ ընթաց-  
քում աշխարհագրական զանազան կետերում:

Աանակտն տարրերի մեջ փոփոխություններ են տեղի ունենալու: Բայց նույն ժամանակ իրար հետևող քարտեզների համադրություններ կարելի յե նկատել վորոշակի որինաչափություններ ողային զանգվածների և բարձր ու ցած ճնշման շրջանների տեղափոխությունների, նույնպես և զանազան ողերեւութարանական տարրերի գուազվորության մեջ:

Որինաչափությունն ողային զանգվածների և բարձր ու ցած ճնշման շրջանների տեղափոխությունների մեջ թույլ և տալիս ախնութիվին (համատեսին), վորոն ուղարկությամբ ուսումնասիրում և յեղանակի քարտեզը, յենթադրություններ անել, թե մոտակա որելում ինչպիս և ուր կշարժվեն ողային զանգվածները և ինչպիս կփոխվեն տաք և ցուլս ճականների դիրքերը, այսինքն, ոյլ խոսքերով ասած, ինչպես կփոխվի յեղանակի քարտեզը մոտակա որերում: Յեղանակի քարտեզի վրա կատարված յենթադրյալ փոփոխությունների հիման վրա սինուպտիկը կանխորոշում՝ նախագուշակություն և անում յեղանակի մասին Միության առանձին մարզերի համար: Հետեւքար, առաջիկա որերի յեղանակի կանխորոշումը հանդում և տվյալ մոմենտում ողի վիճակի ուղարկի ուսումնասիրության և յենթադրության, թե այդ որն ինչպես կտեղափոխվեն ողային զանգվածները և ինչպիսի փոփոխություններ տեղի կունենան նրանց փոխադարձ գիրքերում:

### ԿԱՆԽՈՐՈՇՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՈԱՂԻՒՅՅԻ ՄԻՋՈՑՈՎ

Մուկվայում, Լենինգրադում, բոլոր հանրապետական կենտրոններում և մեր Միության համարյա յուրաքանչյուր մարզում ջրառողերեւութարանական վարչությունների կազմի մեջ են մըտնում յեղանակի բաժիններ կամ ծառայություններ, վորտեղից ամեն որ, սինուպտիկական քարտեզի կազմելուց հետո, հերթապահ մինուպտիկին իր յենթադրություններն և անում առաջիկա որերի յեղանակի մասին: Այդ կանխորոշումը հաղորդվում և ուղիղություն միջոցով: Մուկվայում առաջիկա որերի յեղանակի կանխորոշումը հաղորդվում և մոտավորապես գիշերվա ժամը 12-ին, վերջին լուրերի հաղորդումից հետո: Յեղանակի կենտրոնական ինստիտուտից անմիջաբար գիշերվա ժամը 12 և 35 րոպեյին հատուկ պայմանական ծածկագրերով թվական տվյալներ են հաղորդվում ողերեւութարանական ծառայությունների և ողերեւութարանական կայանների համար: Այնուհետև հաղորդվում են հերթապահ սինուպտիկի կոնսուլտացիաները: Հաղորդումը տալիս է ՀԱՄԿԱ-ի հաղորդիչը 726 մետր ալիքով:

Առավոտյան ավալների ամփոփումը հաղորդվում է 14 ժ. 50  
րոպեյից մինչև 15 ժ. 10 ր., նրա հետ միասին հաղորդվում է նո-  
րեց կոնսուլտացիա և կանխորոշում: 14 ժ. 40 րոպեյից մինչև  
16 ժ. 50 ր. կոնսուլտացիա յետքում Մոսկվայի և Կալինինյան  
մարզերի համար: Ունենալով ռադիոընդունիչ, յուրաքանչյուր կոլ-  
տնտեսություն կարող եւ կոնխորոշում ստանալ այն մասին, թե  
ինչպիսի յեղանակ եւ ոպասվում հետեւյալ որը և որա համապա-  
տասխան պլանավորել իր վաղվա աշխատանքները: Միայն ան-  
հրաժեշտ ենիշել, վոր յեղանակի կանխորոշումներում հսարավոր  
եւ, վոր սխալներ լինեն: Յեղանակի նախագուշակության գիտու-  
թյունը, կամ սինոստիկական ողերեւութաբանությունը, գեռ յե-  
րիտասարդ գիտություններ, իսկ մթնոլորտում տեղի ունեցող յե-  
րեսույթներն այնքան բարդ են, վոր միշտ չի հաջողվում յեղանա-  
կի անսխալ կանխորոշում տալ: Միջին հաշվով մի տարվա ըն-  
թացքում վաղորոք տրված որվար կանխորոշումներն արդարանում  
են մոտավորապես  $85-90\%$ , այսինքն յուրաքանչյուր 100 գեղ-  
քից 85-90 կանխորոշումը հաջող եւ լինում է 10-15-ը՝ անհա-  
ջող: Ամենից հաճախ կանխորոշման անհաջողությունը նրանումն  
ե կայանում, վոր յեղանակի կանխորոշումը վորոշ չափով ուշա-  
նում ե կամ, հակառակը, վորոշ չափով առաջ ե կատարվում, քան  
յենթադրվում եր այս կամ այն յերեսութքը:

ԳԼՈՒԽ 8

ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱԴԵՍՆԵՐԻ ՅԵՂԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐՈՎ

### ՀԱՄԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յեղանակի դիտումները տարվում են շատ հեռավոր ժամա-  
նակներից: Նախադադարյան մարդու կախումը բնության ուժերից  
նրան դրգում եր ուշադրությամբ վերաբերվել յեղանակի յերե-  
վույթներին: Մարդու աշխատում եր սուրզել յեղանակի յերեսույթ-  
ների միջև գոյություն ունեցող պատճառական կապը: Դարերով  
կուտակվում եյին բազմաթիվ տեսակ-տեսակ նշաններ, վորոնք վաղ  
ժամանակներից հաղորդվում եյին տոհմից տոհմ, սերնդից-սերունդ  
ե հասան մինչև մեր ժամանակները: Այդ հշաններից շատերը  
հիմնված են սնուտիալաշտության վրա, բայց յեղանակի ժողովը-  
գական նշաններից շատերը կարող են գիտականորեն բացատրվել  
և կարող են ոգտագործվել յեղանակի նախատեսության համար:  
Կանգ չառներով յեղանակի բոլոր ժողովրդական նշանների վրա,  
մենք կիսունք միայն այն նշանների մասին, վորոնք գիտական  
բացատրություն ունեն և բացատրություն ունեն արդի ողերե-  
վույթաբանության մեջ:

Յեղանակի առաջիկա փոփոխությունները կարելի յետքա-  
տեսնել վոչ միայն սինոստիկական քարտեզով, այլև տեղական  
նշաններով, այսինքն յեղանակի դիտումներից յուրաքանչյուր կե-  
տում, յեթե ուշադրությամբ որեց-որ հետեւ յեղանակի ընթաց-  
քին և աշխատել հասկանալ յեղանակի փոփոխությունների հե-  
տևողականությունը: Այդպիսի դիտումները մատչելի յեն յուրա-  
քանչյուր կոլտնտեսականի, յուրաքանչյուր աշխատավորի համար,  
վորովհետև նրանցից պահանջվում է մինիայն ուշադրությամբ հե-  
տևել յեղանակի փոփոխություններին: Տեղական նշաններն ոգտա-  
վետ են յեղանակի նախատեսության համար և այն գեղքում, յե-  
թե մինչև անգամ յեղանակի բյուրոյի կողմից սադիոյի միջոցով  
արվող յեղանակի կանխորոշումներ են ստացվում: Այդ գեղքում

տեղական նշանները կարելի յե ոգտազործել յեղանակի բյուրոյի կողմից՝ տրվող կանխորոշումները ճշտելու համար։ Յեղանակի փոփոխություններով յուրաքանչյուր հետաքրքրվողի, յուրաքանչյուր կոլտնտեսականի, խորհրդային տնտեսության, Մջկ աշխատակցի համար ոգտավետ ի իմանալ տեղական նշանները և ոգուցվել նրանցով յեղանակը նախատեսնելու համար։

Որեցոր դիտելով յեղանակի փոփոխություններին նախորդող կամ նրանց ուղեկցող յերեսութները, կարելի յե սովորել հասկանալ, թե ինչ է կատարվում տվյալ մոմենտում մթնոլորտում և մոտակա ժամանակ յեղանակի ինչպիսի փոփոխություն կարելի յե սպասել։ Առաջիկա յեղանակի մասին մի վորեենշանով դատելը ծայր աստիճանի անհուսալի յե Առաջիկա յեղանակի մասին շատ թե քիչ ճիշտ դատողություն կազմելու համար պետք և ուշադրությամբ դիտել մթնոլորտային զանազան յերեսութները։ Տեղական նշաններով հաջող կանխորոշման հավանականությունը մեծանում է, յեթե դիտողն իր տրամադրության տակ հասարակ սղերեսութարանական գործիքներ ունի, թեկուզ մետաղյա բարոմետր, կամ, ինչպես այն սովորաբար կոչում են, աներոիդ և ջերմաչափ։

Գոյություն ունի շատ տարածված մի կարծիք, վոր բարոմետրի կամ աներոիդի ցուցմունքներով կարելի յե անսխալ նախատեսնել յեղանակը։ Այսպիսի պատկերացման ոժանդակում և այն հանգամանքը, վոր շատ աներոիդների վրա մակազրություններ կամ՝ «լավ յեղանակ», «փոփոխական», «մեծ չորություն» և այլն։ Այդ մակազրություններին չպետք է նշանակություն տալ։ Աներոիդը միմիայն մթնոլորտային նշշան մեծությունն է ցույց տալիս, առանց վրոշելու յեղանակի մյուս նշանները։ Բարոմետրի ցուցմունքները—նրա բարձրանալն ու իջնելլ—անհրաժեշտ է հաշվի առնել յեղանակի կանխորոշման ժամանակ, բայց միայն յեղանակի փոփոխությունների հնարավորությունը ցույց տվող մի շարք ուրիշ յերեսութների համակցությամբ։

Յեղանակի առաջիկա փոփոխության ամենից հասարակ և բոլորի համար մատչելի նշանները հանդիսանում են ամպերի ձեւվերի և նրանց տեղաշարժության արագության, յերկնքի գույնի, առանձնապես արշալույսի գույնի, լուսնի և արեի շուրջը յեղած պսակի և շրջանի, աստղերի առկայժման և մթնոլորտի այլ լուսատու յերեսութների դիառնմերը։

Յերկնքի գույնը և ողի թափանցիկությունը փոխվում են

համաձայն որում յեղած ջրային գորոշիների և փոշու ժամանիկների քանակության։ Յերե ոգում ջրային գորոշիների քանակն ավելանում է, յերկնքի գույնը մութ յերկնայինից փոխվում է սպիտակավունի, իսկ արշալույսը նարնջագույնից փոխվում է կարմրավունի և մուգագանակագույն-կարմրավունի։ Ըստհանրապես յերկնային յերեսութներում կարմիր գույնի գերակշռումը մթնոլորտում յեղած ջրի առատության նշան է և ցույց է տալիս, վոր մոտ է ցիկլունը։

Այսպես կամ ծիրանագույն—կարմիր վերջալույսն արեկ մայր մտնելու ժամանակ ցույց է տալիս, վոր մոտենում է ցիկլոնական շրջանը։ Ուստի մյուս որը ծիրանագույն կարմիր վերջալույս դիտելուց հետո կարելի յե ուժեղ քամի սպասել։ Կարող է անձրե կամ ձյուն չդաբ, յեթե ցիկլոնը տվյալ վայրը շրջափում է իր յեղրով։ Զմեռը կարմիր վերջալույսը ձյունահողմ է գուշակում։

Դեղին կամ դեղնաշվարդագույնի գերակշռումը ցույց է տալիս, վոր մթնոլորտում փոքր քանակությամբ խոնագույներին կամ, հնուարար, չոր և պարզ յեղանակ և լինելու։

Վարդագույն վերջալույսը սովորաբար մայր մտած արեկ վերկում շրջանի ձև ունի։ Յեթե բիծը նուրբ-վարդագույն է, ապա նա լավ, կայուն յեղանակ և գուշակում Բայց յեթե բիծի գույնն ուժեղանում է, վարդագույն-կարմիր և դասնում—սա ասում է, վոր հնարավոր է, վոր սեղումներ լինեն և քամին ուժեղանաւ։

Վակիեգային վերջալույսը լավ յեղանակից առաջ է լինում։ Յերեմն վուկեզույն և վարդագույն վերջալույսը միաժամանակ են լինում։ Ներքեամ վուկեզույն շերտ, իսկ նրանից վերև վարդագույն շրջան։

Դեղին-դարշնագույն վերջալույսը ձմեռն է լինում, ցրտերի ժամանակ և ցույց է տալիս, վոր սառնամանիքները կարող են հարատե լինել և ուժեղանաւ։

Կանոչ վերջալույս կամ կանաչ նառագույր։ Այս յերեսութը կայանում է նրանում, վոր արեկ մայր մտնելուց առաջ վերջին մոմենտին կամ արեկ ծագման հենց սկզբին, հորիզոնի այն կեռում, վորտեղ անհայտանում կամ յերեան և գալիս արեը, վառ կանաչ փայլ և բռնկվում։ Առ յերկարաւուն չոր յեղանակ և գուշակում։

Անսովար վերջալույսեր։ Այդպիսի վերջալույսեր գիտվում են հրաբխային ժայթքումներից հետո, յերբ մթնոլորտ և բարձրանում մեծ քանակությամբ շատ բարակ հրաբխային մոխիր։ Առան-

տեղական նշանները կտրելի յե ոգտազրութել յեղանակի բյուրոյի կողմեց տրվող կանխորոշումները ձատելու համար: Յեղանակի փոփոխություններով յուրաքանչյուր հետաքրքրվողի, յուրաքանչյուր կոլտնտեսականի, խորհրդային տնաենության, ՄՏԿ աշխատակցի համար ոգտավետ և իմանալ անդական նշանները և ոգտը վել նրանցով յեղանակը նախատեսնելու համար:

Որեց-որ գիտելով յեղանակի փոփոխություններին նախորդող կամ նրանց ուղիղցող յերեսությները, կարելի յե սովորել հասկանալ, թե ինչ ե կատարվում ալյալ մոմենտում մթնոլորտում և մոտակա ժամանակ յեղանակի ինչպիսի փոփոխություն կարելի յե սպասել: Առաջիկա յեղանակի մասին մի վորեն նշանով դատելը ծայր աստիճանի անհուսավի յե: Առաջիկա յեղանակի մասին շատ թե քիչ ճիշտ դատողություն կազմելու համար պետք ե ուշադրությամբ դիտել մթնոլորտային զանազան յերեսությները: Տեղական նշաններով հաջող կանխորոշման հավանականությունը մեծանում է, յեթե դիտողն իր տրամադրության տակ հասարակ սղերեսութարանական գործիքներ ունի, թեկուզ մետաղյա բարոմետր, կամ, ինչպես այն սովորաբար կոչում են, աներոխ և ջերմաչափ:

Գոյություն ունի շատ տարածված մի կարծիք, վոր բարոմետրի կամ աներոխի ցուցմունքներով կարելի յե անսխալ նախատեսնել յեղանակը: Այսպիսի պատկերացմանն ոժանդակում ե այն հանգամանքը, վոր շատ աներոխների վրա մակազրություններ կան՝ «լավ յեղանակ», «փոփոխական», «մնած չորություն» և այլն: Այդ մակարդություններին չպետք ե նշանակություն տալ: Աներոխը միմիկայն մթնոլորտային ճնշման մեծությունն ե ցույց տալիս, առանց վորոշելու յեղանակի մյուս նշանները: Բարոմետրի ցուցմունքները—նրա բարձրանալն ու իջնելը—անհրաժեշտ ե հաջի առնել յեղանակի կանխորոշման ժամանակ, բայց միայն յեղանակի փոփոխությունների հնարավորությունը ցույց տվող մի շարք ուրիշ յերեսությների համակցությամբ:

Յեղանակի առաջիկա փոփոխության ամենից հասարակ և բոլորի համար մատչելի նշանները հանդիսանում են ամպերի ձեռվերի և նրանց տեղաշարժության արագության, յերկնքի գույնի, առանձնապես արշալույսի գույնի, լուսնի և արեւի շուրջը յեղած պատկի և շրջանի, աստղերի առկայժման և մթնոլորտի այլ լուսատու յերեսությների դիտումները:

Յերկնքի գույնը և ողի թափանցիկությունը փոխվում են

համաձայն ողում յեղած ջրային գոլորշիների և փոշու մասնիկների քանակության: Յերբ ողում ջրային գոլորշիների քանակն ավելանում է, յերկնքի գույնը մութ յերկնայինից փոխվում և սպիտակավունի, իսկ արշալույսը նարնջագույնից փոխվում է կարմրավունի և մուգապատճակագույն-կարմրավունի: Ըստհանրապես յերկնային յերեսությներում կարմիր գույնի գերազակումը մթնոլորտում յեղած ջրի առատության նշան է և ցույց ե տալիս, վար մոտ և ցիկլոնը:

Այսպես կարմիր կամ ծիրանագալն—կարմիր վերջալույսն արել մայր մանելու ժամանակ ցույց ե տալիս, վոր մոտենում և ցիկլոնական՝ շրջանը: Ուստի մյուս որը ծիրանագույն կարմիր վերջալույս դիտելուց հետո կարելի յե ուժեղ քամի սպասել կարող ե անձրե կամ ձյուն չգաք յեթե ցիկլոնը տվյալ վայրը շուշափում ե իր յեղորդ: Զմեռը կարմիր վերջալույսը ձյունահողմ ե գուշակում:

Դեղին կամ դեղնավարդագույնի գերակշռումը ցույց ե տալիս, վոր մթնոլորտում փոքր քանակությամբ խոնագույն կամ է, հետեարար, չոր և պարզ յեղանակ և լինելու:

Վարդագալն վերջալույսը սովորաբար մայր մոտած արել վերեսում շրջանի ձև ունի: Յեթե բիծը նուրբ-վարդագույն է, ապա նա լավ, կայուն յեղանակ և գուշակում հայց յեթե բիծի գույնն ուժեղանում է, վարդագույն-կարմիր և դառնում—սա ասում է, վոր հնարավոր է, վոր տեղումներ լինեն և քամին ուժեղանա:

Վասկիգալն վերջալույսը լավ յեղանակից առաջ և լինում: Յերբեմն վոսկեղույն և վարդագույն վերջալույսը միաժամանակ են լինում: Ներքեսում վոսկեղույն շերտ, իսկ նրանից վերև վարդագույն շրջան:

Դեղին-դրաշնազույն վերջալույսը ձմեռն է լինում, ցրտերի ժամանակ և ցույց ե տալիս, վոր սառնամանիքները կարող են հարատե լինել և ուժեղանալ:

Կանչչ վերջալույս կամ կանաչ հասարակը: Այս յերեսութը կայանում է նրանում, վոր արել մայր մանելուց առաջ վերջին մոմենտին կամ արել ծագման հենց սկզբին, հորիզոնի այն կեռում, վորեւղ անհայտանում կամ յերեսն և զալիս արել, վառ կանաչ փայլ և բռնկվում: Սա յերկարատե չոր յեղանակ և գուշակում:

Անսովար վերջալույսը: Այդպիսի վերջալույսեր դիտվում են հրաբխային ժայթքումներից հետո, յերբ մթնոլորտ և բարձրանում մեծ քանակությամբ շատ բարակ հրաբխային մոխիր: Առան-

ձին ինտենսիվությամբ աչքի եյին ընկնում վերջալույսերը կրակատառ հրաբխի ժայթքումից հետո, 1883 թ.: Արևի մայր մանելուց հետո յերկնքի արևմոյան մասը ներկվում եր վառ ծիրանի գույնով, վորը հսկայական էրդեհի լույսի յեր նմանվում: Յերեկվա ժամերին արևի սկավառակը, իսկ զիշերվա ժամերին լուսնի սկավառակը յերկնային կամ կանաչ գույն եյին ընդունում:

Արևի սկավառակի ձևի փափսխությունը մայր մանելիս և ծագելիս (նկ. 40): Յերեկն արևի սկավառակը, նույնպես և լուսնի, հորիզոնից մոտիկ գանգիլով՝ ծոված ձև և ընդունում: Մերթ ձվաձևեթվում, մերթ զդակի, սունկի ձև ունի, մերթ մութ գծերով և շերտերով բաժանված և մասերի: Այս յերեւյթը կախված և մըթնոլորտի ստորին շերտերի ողի անհավասարաչափ խտությունից, վորի հնականքով արևի գանազան մասերից յեկած ճառագայթները ծովում, կորանում են: Այդ յերեւյթը նկատելի յի լինում անձրեային յեղանակից հետո և անձրեներից հետո չոր, հակացիլոնական ափակի յեղանակ սկսվելու նշան եւ:

Աստիճանի տոկայնում: Աստղերը հավասար, մշտական լույսով չեն լրսավորում. Նրանք մեկ բանվլում են, մեկ մարում և բազմագույն փայլ են տալիս: Աստղը մեզ թվում և մեկ կարմրավուն, մեկ կանաչավուն, մեկ կապույտ: Աստղերը կարծես թե զողում են. Տարբեր աստղերի արկայծումը տարբեր եւ: Մոլորակները սովորաբար չեն առկայծում: Նրանք յերկրին ավելի մոտ են զտնվում և մեր աչքին վոչ թե իբրև կետեր են յերեւյմ, ինչպես աստղերը, այլ փոքրեկ շրջանիների ձևով, վորոնցից յեկած լույսը շատ թեքի հարատես և մնում: Միայն մթնոլորտի առանձնապես անհանգիստ զրության ժամանակ մոլորակներն ել նույնպես առկայծում են, բայց ավելի թույլ քան աստղերը:

Աստղերի առկայծումը տեղի յի ունենում մթնոլորտում յեղած տաք և ցուրտ ողի միջնաշերտերից: Աստղերից յեկող ճառագայթների բարակ փունջը անցնելով այդ միջնաշերտերով, մեկ սեղմվում ե, մեկ լայնանում: Դրա հստակ քով մեր աչքը մեկ փոքր քանակությամբ, մեկ մեծ քանակությամբ ճառագայթ եր են ընկնում, և աստղը մերթ քիչ, մերթ շատ վառ և թվում:

Աստղերի առկայծման աստիճանը կախված և յեղանակի վիճակից: Յերբ մթնոլորտը խաղաղ ե, աստղերը չեն առկայծում, կամ թույլ են առկայծում: Աստղայծումը մեծանում ե, յերբ մոտենում և ցիկլոնական շրջանը: Այդ գեպքում շատ հաճախ աստղերն սկսում են առկայծել ավելի շուտ, քան ողերեւնքաբանական տար-

բերի ընթացքը նշող դործիքի վրա կարելի յե նկատել ցիկլոնական շրջանի մոտենալը: Անձրիկ մոտենալու ժամանակ վոչ միայն ուժեղանում և առկայծում, այլև աստղերը գերազանցապես կապույտ լույսով են լուսավորում: Յերաշտից առաջ աստղերի առկայծման ժամանակ նկատելի կերպով ուժեղանում և կանաչ գույնը:

Երշաններն արևի և լուսնի ըուրջը, նույնպես և ուրիշ լուսատու յերեւյթները — սյուները, յերկրորդական արեները և լուսինները բացարձում են նրանով, վոր արևի և լուսնի ճառագայթները բեկլում և անդրադառնում են ողում գտնված սառցե բյուրեղիկներից: Լուսատուն մեզանից ծածկող փետրանման-շերտավոր ամպերի ժամանակ նկատվում են շրջաններ: Կիսում են մնջ և փոքր շրջաններ: Նրանք զալլո անունն են կրում: Այդ շրջանների կենտրոնը հանդիսանում և լուսինը կամ արևը: Շրջանի ներքին մասը ներկված են կարմրավուն գույնով, իսկ գրսի մասը՝ կապույտ-մանիշակագույն: Այդ շրջանի ներսում յերկինքն ավելի մուգ ե, քան գրսից: Փոքր կամ մեծ շրջանի յերեւան գալլը բացարձում և նրանով, վոր ողում զոյություն ունեն վեցանիստ պրիզմայի ձևով սառցե բյուրեղիկները, վորոնց առանցքներն ամեն տեսակի ուղղություն ունեն: Յեթե լույսի բեկումը տեղի յի ունենումը բյուրեղիկների կողքի պրիզմաներում, վորոնց բեկող անկյունը հավասար ե 60°, ապա զիտվում և փոքր շրջան: Իսկ յեթե բեկումը տեղի յի ունենումը բյուրեղիկների հիմքից, վորոնք ուղիղ անկյուն ունեն, ապա զիտվում և մեծ շրջան:

Շրջաններն արևի և լուսնի շրւթը հանդիսանում են ցիկլոնական շրջանի մոտենալու նախակարապետ և, հետեւարար, անձրիկ կամ ձյան, ուժեղ քամու կամ բորանինախակարապետ: Ամառը գալլոյի յերեալը ցույց և տալիս, վոր հնարավոր և զով և անձրեային յեղանակ, ձմեռը՝ հնարավոր և տաքացում:

Յերենք հետեւյալ որինակը, վորը ցույց և տալիս, վոր գալլոյի յերեալը ցիկլոնական շրջանի մոտենալու նշան եւ:

1936 թ. ապրիլի 7-ին Մոլոգա քաղաքում արևի մոտ դաշտ յեր գիտվում, 13 ժ. արևի մոտ յերեալ բավականին վառ փոքր շրջան: 15 ժ. 40 րոպեյից յերեւյթն ուժեղացավ, յերեացին յերկրարդ մեծ շրջանը, յերկու աղեղ և սպիտակ հորիզոնական շրջան 6 կեղծ արևեների հետ միասին: Վերին աղեղն աչքի յեր ընկնում առանձնապես վառ կարմիր գույնով ուղղված զիողի արևը: 17 ժ. մոտ շրջաններն անհայտացան: Յեղանակն այդ որ առավոտից պարզ եր՝ բարեխառն հարավ-արևմտյան քամու և փոքր քանա-

կությամբ փետրանման ամպերի հետ միասին, վորոնք հետո սկզբացին մեծանալ և դարձան փետրանման շերտավոր: Մյուս որը յեղանակը բոլորովին փոխվեց: Առավոտից տևական բուք սկսվեց: Կեսորին քամին ուժեղացավ, սկսեց ձյուն տեղաւ իսկ գիշերն ուժեղ բուք արեց: Դատ յեղանակը տեսեց մինչեւ ապրիլի 11:

Կեղծ արև: Դրանք լուսավոր բծեր են, վորոնք յերեմն այն մոմենտին են յերեռմ, յերե արել հորիզոնից բարձր չի գտնվում: Այդ բծերը սովորական փոքր ըրջանի տարածության վրա արեի հետ մի բարձրության վրա յեն գտնվում: Բծի արեին մոտիկ մասունք ներկված է կարմիր գույնով, իսկ զրոյի մասը՝ բաց մանիշակագույն: Սովորաբար այդպիսի գույնավոր բծերից արեի հակառակ կողմերը լուսավոր շերտեր են տարածվում:

Կեղծ արևներ զիտվում են սովորաբար թեթև փետրանման ամպերի ժամանակ, վորոնք յերեմն աշքի համար բոլորովին անկատելի յեն լինում:

Աւզդակիք պահներ: Յերեմն արեի կամ լուսնի վերեռմ—սովորաբար, յերե նրանք հորիզոնի մոտ են գտնվում կամ նույնիսկ հորիզոնի տակը (արեի մայր մտնելու ժամանակ)—ուղղածիդոյն և նկատվում: Մյուսները սովորաբար անգույն են, բայց հաճախ յերեկոյան վերջալույսի լույսի տակ նրանք ներկված են լինում կարմրավուն գույնով: Այս յերենոյթը բացատրվում է հիմքից դանդաղ իջնող ոդում յեղած սառցե բյուրեղների լուսատու ձառագայթների արտացըլումով:

Պահներ արևի և լուսնի օւրչը (նկ. 40): Պահները պետք են տարբերել շրջաններից: Յերբ արել կամ լուսինը զիտողից ծածկվում են սառցե բյուրեղներից կամ մանր կաթիլներից բաղկացած բարակ ամպերով, ապա շատ հաճախ այդ լուսատուների շուրջը զանազան չափի գույնավոր ողակներ են յերեռմ, վորոնք կոչվում են պսակներ: Դրանք սովորաբար լավ նկատելի յեն լուսնի շուրջը:

Ծիծածնի գույնների գասավորությունը պսակներում հակառակ են նրան, վորը զիտվում են շրջաններում: Սովորաբար լուսնի շուրջը յերկնագույն կամ յերկնագույն-սպիտակ շրջան ե յերեռմ, հետո գալիս ե գեղնավուն, իսկ զրոյից՝ կարմիր: Մի պսակին միանում ե յերեմն հետեւյալ ողակը՝ գույնների նույպիսի գասավորությամբ, ինչպես առաջինն ե, բայց ավելի գույնատ: Յերեմն միքանի այգպիսի ողակներ են լինում: Պահների մեծությունը չափազանց բազմազան ե լինում: Յերեմն կարմիր ըրջանը հա-

մարյա միանում ե լուսնի յեղբին, իսկ յերեմն ել յետ և գնում նրանից փոքր տարածության վրա:

Պահների յերեալը բացատրվում է նրանով, վոր լուսատու ձառագայթներն անցնում են առանձին բյուրեղիկների և ջրային մանր կաթիլների մանրագույն արանքներից: Նման պսակներ արեւնատականորեն կարելի յետ ստանալ, յեթե ապակյա թերթիկի վրա լիկոպոդիայի սերմեր ցանել և գնել այն լույսի աղբյուրի և աչքի սիջն: Արհեստական պսակներ կարելի յետ ստանալ նաև ավելի պարզ ձեռվ՝ արտաշնչելով ապակյա թերթիկի վրա, բայց միայն այս դեպքում պսակներն ավելի թույլ նկատելի կլինեն: Պահների մեծությունը կախված է ջրային կաթիլների կամ սառցե բյուրեղիկների մեծությունից: Վորքան վոր կաթիլները կամ բյուրեղիկները փոքր լինեն, այնքան մեծ կլինի պսակը և, հաշվակը:

Յեղանակի փոփոխություններ կարելի յետ նախատեսներ առանձին հավանականությամբ մեծ պսակներից—լուսնի սկավառակի 6—10 տրամագծի չափ, և մանրներից, վորոնք համարյա անմիջաբար կամ քիչ կամած են սկավառակին: Մեծ պսակները լինում են այն ամպերում, վորոնք կազմված են շատ մանր ջրային մասնիկներից, իսկ փոքր պսակները—մեծ կաթիլներից բաղկացած ամպերից: Մեծ պսակները ցույց են տալիս, վոր մթնոլորտի այն շերտում, վորաեղ ամպն ե գտնվում, ոդը չորե, իսկ փոքր պսակները հանդիսանում են այդ ոդի մեծ խոնավության նշան: Այսպիսով, պսակների մեծությունը ցույց ե տալիս առաջիկա յեղանակը ել ավելի լավ ցուցանիշ ե հանդիսանում պսակների մեծության փոփոխությունը: Յեթե նրանք մեծանում են, ուրիշն լավ յեղանակ ե լինելու, վորովհետև զա ցույց ե տալիս, վոր պակասում է ոդի խոնավությունը, իսկ յեթե նրանք փոքրանում են, նշանակում ե անձրե կամ ձյուն ե գալու, վորովհետև այդ վկայում է, վոր ոդի խոնավությունն ավելանում է: Փոքր պսակներ լինում են ցիկլոնի գալու ժամանակ, իսկ մեծերը—ցիկլոնի գնալու ժամանակ բարձր ճնշում սկսվելու ժամանակ:

Ոգտվելով տեղական զանազան պայմաններից, կարելի յեղբակացություն անել առաջիկա յեղանակի մասին վոյ յերկար ժամանակամիջոցի համար —6—12 ժամով և միայն առանձին գեա-

քերում մի որ առաջ: Վորակնեղի սովորել տեղական պայմաններով դատել առաջիկա յեղանակի մասին, անհրաժեշտ և ամեն որ վորոշ ժամերի, իսկ ավելի լավ և որվա ընթացքում յերկույթերեք անդամ ուշադրությամբ դիտել յերկինքը, նշել ամպերի տեսակները, նրանց բարձրությունը և շարժումը, վորոշել քամու ուղղությունը և արագությունը:

Տեղական բոլոր նշած նշանների և նրանց հիման վրա կանխորշումների ամենորյա զրանցումը կոդեմ ստուգել յեղանակացությունների ճշությունների ըստ իսկական յեղանակի բնույթի, նկատի ունենալով, վոր հետազայում պետք և հաջվի առնել անխուսափելի, հատկապես սկզբում, սխալները:

Անհրաժեշտ և նշել, վոր առաջիկա յեղանակի կանխորշումների կազմելը տեղական պայմաններով միայն կուլիտ որինստիր բնույթ և կրում:

Յեղանակի ընդհանուր բնույթը պայմանավորվում և ողային զանգվածների տեղաշարժումով և ճակատների անցումով: Նրանց տեղափոխությունների մասին մենք կարող ենք դատել ըստ այն յերեսույթների, վորոնք տեղի յեն ունենում մշնողրափ վերին շերտերում: Ուստի յեղանակի նախագուշակության համար կարենը և իմանալ վոր կողմը և ինչպիսի ուժով և փշում քամին մեծ բարձրության վրա:

Հստ ամպերի ձեի և նրանց տեսակի կարելի յե մոտավորապես դատել, թէ յերկրից ինչպիսի բարձրության վրա յեն դուռը վում նրանք, իսկ ըստ նրանց շարժման—քամու ուժի և ուղղության մասին այդ բարձրության վրա:

## ՀԱՍՏԱՏՈՒՆ ԼԱՎ ՅԵՂԱՆԱԿԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Հստ ներքում թվարկվող նշանների կարելի յե դատել, տարվա ցուրտ ժամանակ ցուրտ, պարզ յեղանակի և ամառը—չոր, պարզ, շող յեղանակի անցնելու մասին:

1. Բարումետրական ճնշումը մի քանի որվա ընթացքում դանդաղ և անընդհատ բարձրանում եւ:

2. Բարումետրական ճնշումը գտնդաղ բարձրանում և կամ անշարժ և մնում հարավային քամու ժամանակի:

3. Ուժեղ քամու ժամանակ բարումետրական ճնշումը բարձրանում եւ: Գտընանը և աշնանն այդ պայմանում հնարավոր են գիշերային ցրտեր:

4. Տարվա տարք ժամանակ մի որվա ընթացքում բարեխառնությունը խիստ փոխվում ե, յերեկոյան դեմ դով ե:

5. Տարվա տարք ժամանակ յերեկոյան և գիշերը անտառում նկատելի տարք ե, քան բաց դուշտում:

6. Յերեկոյան կամ գիշերը բաւրների կամ բարձունքների վրա ավելի տարք ե, քան ցածր վայրերում:

7. Յերեկոյան խոտի վրա առատ շաղ և դնում, ուժեղ յերաշտի ժամանակ կարող և շաղ չլինել:

8. Յ բեկոյան և գիշերը հօվիտներում, մարդագետներում, գետահովիտներում մառախուզներ են լինում, վորոնք ցրված են արեվի ծագելուց հետո:

9. Գիշերը և առավոտյան խաղաղ ե: Արեվի ծագելու հետ քամի յեսկով ևմ, վարն ուժեղանում ե 12—15 ժամին: Յերեկոյան գեմ քամին թուլանում ե, իսկ գիշերի մոտ գաղարում:

10. Ծոփի կամ մեծ լճի մոտ յերեկը քամին փչում և ծովից, իսկ յերեկոյան, ընդհակառակը, ցամաքից դեպի ջուրը:

11. Ամպերի ուղղությունը վորոշ չափով շեղվում և դեպի ձախ քամու ուղղության համեմատությամբ՝ յերկը մակերեսին վույթի մոտ:

12. Վաղ առավոտյան յերկինքն անամու ե: Այնուհետեւ յերեկան են գալիս կուտակային ամպեր՝ լավ գծադրված՝ յերերով: Մեծանալով 15—16 ժամերին, հետո նրանք մկնում են անհետանալ:

13. Յերեկը փոքր կուտակային ամպեր են յերեսում, վորոնց արանքից լուսանում են կուտակային ամպեր՝ լավ գծադրված՝ յերերով:

14. Առավոտյանից յերեւմ/են բարակ, համարյա անշարժ փետրանման ամպեր, վորոնք յերեկոյան գեմ անհետանում են:

15. Վերջարկույթի ժամանակ յերկինքը վուկեղույն և կամ բաց-վարդագույն: Յերբեմն հորիզոնի մոտ վուկեփայլ շերտ և յերեսում, իսկ նրա վերեսում՝ վարդագույն բիծ:

16. Արեի մայր մտնելու ժամանակ գիրակշում են կանաչավուն գույները:

17. Արեի և լուսնի մկանակ արեի մայր մտնելու ժամանակ անկանոն, շատ աղավաղված ձև ունի:

18. Աստղերը թույլ են առկայժում և կանաչավուն փայլ  
ունեն:

### ՀԱՍՏԱՏՈՒՆ ՎԱՏ ՅԵՂԱՆԱԿԻ ՆՇԱՆՆԵՐ

1. Յած բարոմետրական ճնշումն որվա ընթացքում քիչ և  
փոխվում կամ իջնում:

2. Զմեռը համեմատորեն բարձր ջերմաստիճան ե, ամառ՝  
բարեխառն:

3. Բավականաչափ յերկար ժամանակամիջոցում անընդհատ  
մեղմ ձյուն կամ անձրև և գալիս: Ավելի ուժեղ ձյուն կամ անձրև  
ընդմիջումներով և գալիս:

4. Արեմտյան, հարավ-արեմտյան կամ հյուսիս-արեկմտյան  
ուղղության բավականաչափ արտղ քամի յե փշում:

5. Ամառն ամպերը միշտ միապաղաղ միատեսակ ծածկոց չեն  
կաղմում: Զմեռային ժամանակ յերկինքն ամբողջութին ծածկած  
ե հասաւ կամ անձրեարեր ամպերով:

### ՅԵՂԱՆԱԿԻ ԴԵՊԻ ՎԱՏՎԵԼՈՒ ՆՇԱՆՆԵՐ

1. Բարոմետրական ճնշումն իջնում ե, վորքան արագ  
և տեվական և այդ իջնումը, այնքան ճիշտ և նշանը:

2. Զմեռն ողի բարձր ճնշման և պարզ յեղանակի դեպքում  
ողի ջերմաստիճանը բարձրանում և հատկապես զիշերը:

3. Ամառը պարզ խաղաղ յերեկին հաջորդում ե, նախըն-  
թացի համեմատությամբ, տաք գիշեր:

4. Յեթե յերեկոյան դեմ քամին ուժեղանում ե, ապա մի  
որից ուշ կարելի յե վատ յեղանակ սպասել:

Յեթե քամին ուժեղանում ե, իսկ նրա ուղղությունը պատույա  
և գալիս ժամացույցի սլաքով, ապա կարելի յե յերկարատես անձ-  
րեվային յեղանակ սպասել:

5. Ուժեղ կամ չափավոր-ուժեղ քամիներ (ավելի հաճախ  
հյուսիս-արևմտյան, հյուսիսային կամ հյուսիս-արևմելյան ուղ-  
ղությամբ):

6. Յերկար յերաշտի ժամանակ բարոմետրի տատիճանա-  
կան անկում, յերեկոյան դեմ քամու ուժեղացում և ամպամա-  
ծության ավելացում: Ծով և տոթ որ:

7. Յերկար յերաշտի ժամանակ բարոմետրի տատիճանա-  
կան անկում, յերեկոյան դեմ քամու ուժեղացում և ամպամա-  
ծության ավելացում: Ծով և տոթ որ:

8. Յած, բայց բարձրացող բարոմետր. հյուսիս-արեկելյան  
քամիներ (կարելի յե սպասել ցուրտ յեղանակ և անձրե):

9. Գետնահար քամու լայնությամբ կամ նրա հանդիպական  
ամպերի շարժում:

10. Յերեկոյան դեմ ամպամածության ավելացում:

11. Համեմատորեն խիտ, աարեր ձեերի արագ շարժվող  
փետրանման ամպեր:

12. Հաստ մոխրագույն ծածկոցով յերկինքը ծածկող շեր-  
տավոր ամպեր, վորոնց արանքով մշուշային գեղին բծի ձևով  
դուրս և նայում արել:

13. Յերեւում են անձրեաբեր, նույնպես և ալիքաձև ամպեր,  
վորոնք նման են ծովի ալիքների կատարին:

14. Կատվի պոչին կամ փրփրալիքներին նման փետրանման  
ամպեր: Սպիտակ գնդերի նման, յերկնքի յերեսին փոված մանր  
փետրանման կուտակային ամպեր:

15. Վառ-կարմիր վերջալույա:

16. Աստղերի ուժեղ առկայժում, վորը ցույց է տալիս, վոր  
ողի խտությունը շարունակ փոխվում ե, վորը տեղի յե ունե-  
նում ցածի ավելի ցուրտ ողի վերին տաք ուղային հոսանքների  
հետ խառնվելուց:

17. Մառախուղների բացակայություն այն տեղերում, վոր-  
տեղ սպիրաբար նրանք լինում են:

18. Արեւ մայր և մտնում յեզրերը ծիրանագույն ներկված  
իմաստ ամպերի հետեւը:

19. Յերկարատես մթնաշաղ:

20. Լուսնի կամ արեկի շուրջը պաշաններ կամ գուլու: Նույն  
լուսատուների շուրջը փոքր չափի պատկեր:

### ՅԵՂԱՆԱԿԻ ԴԵՊԻ ՎԱՏՎԵԼՈՒ ՆՇԱՆՆԵՐ

1. Տեվական վատ յեղանակի դեպքում վորոշակի և պարզ  
հետեւյալ նշանների առկայություն. բարոմետրի ճիշտ բարձրա-  
ցում, ջերմության խիտ նվազում, բավականին ուժեղ ցուրտ  
քամիներ, յերկնքի աստիճանական պարզում:

2. Յած ճնշման դեպքում—ողի ջերմաստիճանի իջեցում:

3. Բույլ շարժվող և յերեկոյան դեմ անհետացող տարբեր  
տեսակի տարրինակ փետրանման ամպեր:

4. Փոփոխակի ամպամածություն, լուսանցիկներ են յերե-  
վում:

5. Յերեկվա վատ յեղանակի գեպքում յերեկոյան դեմ արեկ-  
մութքում պարզ յերկնքի շերտ և յերեվում:

6. Յերեկոյան դեմ մառախուղներ են յերեվում:  
7. Կարճ մթնաշաղ:

### ԱՄՊՐՈՊԻ ՄՈՏԵՆԱԼՈՒ ՆՇԱՆՆԵՐ

1. Յերեկը շատ շոգ և մեծ խոնավություն (տոթ ե):
2. Կուտակային ամսկերի աճում բարձր աշտարակների կամ սյուների ձևով (այդպիսի ամսկերի գոյացումը ցույց ե տալիս վեր բարձրացող ուժեղ հոսանքների առկայություն):
3. Յեթե անձրևային յեղանակին տաքանում ե, ապա պետք ե սպասել անձրեի կամ ամպրոպի ուժեղացում (սա ցույց ե տալիս, վոր ուրիշ ցիկլոն և մոտենում):
4. Չոր և տոթ յերեկոյան յերեկինը ծածկվում և ամսկերի հաստ ծածկոցով:
5. Յեթե փոթորիկներն անցել են յերեկով և վերջալույսը կարմիր գույն չունի, ապա պիշերը փոթորիկ չի նախատեսնվում:
6. Հարավային քամու ժամանակ բարոմետրի իջեցումը հանգիսանում և անձրեկ մոտեցման նշան, հաճախ ամպրոպի հետ միասին:
7. Շոգ յեղանակին արեվելյան քամի յե փշում և բարոմետրն արագ բարձրանում է:
8. Պարզ լսվում են առանձին թույլ հնչյուններ:

### ՅԵՂԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՈՒՐԻՇ ՆՇԱՆՆԵՐ

Քոյություն ունի ելի մի շարք նշաններ, վորոնք անմիջորեն կապված չեն ողերեկութաքանական յերեվույթների հետ: Այդ նշանները կամ ֆիզիկական քացարություն ունեն, կամ կապված են առանձին ողերեկութաքանական տարրերի կենդանիների վրա ունեցած ազգեցության ընթացքի հետ:

Ֆիզիքական նշաններ կարելի յե համարել հետեվյալները. յեթե ծուխը ծխնելուց հերից կամ խարույկներից վեր և բարձրանում, սա լուրջ յեղանակի նշան է: Յեթե խաղաղ յեղանակին ծուխը փոխում և գետնին մոտիկը զա վատ յեղանակի նշան է:

Վատ յեղանակից առաջ աղը խոնավանում է, պարանը վուրփում է, լարերն սկսում են առանձնապես բարձր շառաչել. կանգնած ճակների հոտած ջրերից ուժեղանում և անդուրեկան հոտը:

Լավ կամ վատ յեղանակից առաջ դիտվող մի շարք յերեկույթներ կապված են մթնոլորտային ճնշման փոփոխության ազդեցության կամ ոդի խոնավության ազդեցության հետ կենդանիների վրա:

Որինակ, նկատված ե, վոր լավ յեղանակից առաջ ծիծեռնակները վերեւ են թոչում, մեղունները վաղ են դուրս թոչում դաշտում, մոծակները թոչում են խմբերով:

Վատ յեղանակից առաջ ծիծեռնակները ներքեւում են թըռչում, հավերը և ճնճղուկները լողում են փոշու մեջ, գորտերը մեծ թվով գուրս են սողում ճաճիճներից:

Անձրեկից առաջ ձուկը կարթ չի ընկնում: Կատունները և ները ցրտի դեմ կլոր վախթաթվում են:

Ցանկալի յե դիտել և ստուգել այդ նշանները:

Գիտա-գործնական ողերեկութաքանության կարիքների համար ցանկալի յե վոչ միայն յեղանակի թվարկած նշանների ձիշտ դիտումներ կատարել վոչ միայն այդ գիտումների հետեւնքները ճշտապահությամբ և ճշգրիտ կերպով գրանցել այլ գուգընթացար պետք և գրանցել յեղանակի մոտակա որերի բնորոշ հայտաբումները: Որինակ, այսոր յերեկի վրա մանր ամպեր կային, իսկ վաղն անձրեկ տեղաց, հետեւյալ որը ծիրանագույն-կարմիր վերջալույս եր դիտվում, իսկ նրանից - 12 ժամ հետո անձրեկ տեղաց և այլն: Յեթե դիտվող յերեկույթների առդրումները հետագա յեղանակի հետ կանոնավոր տարվեն, ապա վերջիվերջո ուշագիր և ջանասեր դիտողի մոտ տեսրում լավ յեղանակը վատի փոխվելու նշանների սխեմա կստեղծվի: Զննելով այդ բազմաթիվ գրանցումները, նա կարող է շատ թե քիչ պարզ պատկերացնել յեղանակի գետի վատը փոխվելու հավանականությունը, կկարողանա յեղանակի նախագուշակության խնդրում ստուգել իր տեսական դիտելիքները, լրացնել այդ դիտելիքները փորձնական միջոցներով, սեփական դիտումներով, և, այսպիսով, իր գանձը մտցնել գործնական ողերեկութաքանության մեջ:

Յեթե մի քանի նշաններ/համընկնում են, ապա դա հաստատում է յեղանակի կանխորշման ճշտությունը: Զհամընկնելու կամ հակասության դեպքում դեպի նշանները պետք և վերաբերվել շատ զգուշաբար:

### ՅՐՏԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Քարնանային ցրտերը համարյա ամեն տարի մեծ վասա են հասցնում գյուղատնտեսությանը, առանձնապես այգեգործությանը և բանջարաբուծությանը: Սակայն, յեթե ժամանակին նախազգուշական դիտելիքների հնարավոր գալուց, տապա զանազան միջոցառումներով, որինակ, սածիների տեղափոխությունն ուշացնելով

կամ ջերմոցները պաշտպանելով կարելի յե այդ վասը բավակառաչափ փոքրացնել:

Ջրառդերեւթարանական վարչության կից կենտրոնական ինստիտուտը գարնանը վորոշ ժամերի սովորաբար սադիոյի միջոցով նախազգուշացնում ե ցրտերի սկսվելու հնարաւորությունը. վորպեսդի կարելի լինի ժամանակին անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել:

Գտրնանային ցրտերի (առավոտյան ցրտերը) սկսվելը յերեկու պատճառ ունի. 1) ցուրտ և լինում գիշերային ճառագայթան հետևանքով, այսինքն գետնից նրան շրջապատող ողին ջերմություն հաղորդվելու հետևանքով. 2) ողի սառը հոսանքների ներխուժումից, վորին ուղեկցում ե ջերմության շատ արագ և խիստ անկում ողի մեծ չորության և թափանցկության հետ միասին:

Ենթառաջին, և յերկրորդ գեպքում ամպերի ներկայությունը կասեցնում ե տաքությունը. ամպերը, տասս թե, վերեկց ծածկում են ողի ստորին շերտերը: Ի՞ր հերթին քամին, խառնելով ողի սառը և ավելի տաք շերտերը և թույլ չտալով սառը շերտերին գետնի մոտ ննալ նույնական խանգարում ե ցրտերի սկսվելուն: Այսպիսով, քամու ու ամպերի յերեալը պակսեցնում ե ցրտերի սպառնալիքը:

Ողի խոնավությունը ցրտերի նկատմամբ նույնական մեծ դեր է խաղում: Ջրային գոլորշները՝ ջնորհիվ արեկց ստացած ջերմության կուտակման նրանց մեջ, թուլացնում են գիշերային ճառագայթման ուժը:

Աօնտեալին և զարնանային ցրտերի առաջ գալու վրա շատ ուժեղ կերպով են աղջում տեղական պայմանները, այն ե՝ տեղի դիրքը, բռւսականության բնույթը, հողի հատկությունը: Որինակ, հայտնի յե, վոր աօնտեալին և զարնանային ցրտերը ցած վայրերում շատ ավելի ուժեղ են լինում, քան բլուրների և գաղաթների վրա: Ուստի ցրտերից նախազգուշանալու համար շատ կարեռ և հաշվի առնել տեղական բռլոր սուանձնահատկությունները:

Մի կետում կատարած դիտումներով աշնանային և գարնանային ցրտեր նախազգուշակելու մի քանի միջոցներ կան: Այդ միջոցները հիմնած են ողի խոնավության, ցողի կետի վորոշման և ջերմաստիճանի ընթացքի դիտումների վրա: Այստեղ մենք ցույց կտանք ցրտեր գուշակելու ումենապարզ միջոցները:

Ամենից առաջ պետք ե պարզել, թե ինչ ե նշանակում ցողի կետ: Ողում միշտ ջրային գոլորշներ կան: Ջերմաստիճանի իջեց-

ման ժամանակ ջրային գոլորշներն ավելի ու ավելի շատ են հագեցնում ողը. հագեցման մոմենտում, յերբ ողն իր մեջ խոնավության ամենամեծ քանակությունն ե պարունակում (100%), ցող և իջում: Այն ջերմաստիճանը, վորի ժամանակ ողից ցողի ձևով գոլորշու արտադրությունն ե սկսվում (նույնպես և յեղիամի և մտախուղի ձևով) կոչվում ե ցողի կետ:

Յեթե յերեկոյան ժամի 9-ին ցողի կետը 2°-ից ցած ե իջնում, ապա, յեթե յերկինքն անսամլ ե և քամի չկա, կարելի յեցուրտ սպասել: Յեթե այդ ժամանակ բարումները բարձրանում ե, ապա ցրտի հավանականությունն ավելանում ե: Ըսդհակառակը, բարումների անկումը և ամպամածության մեծանալը ցրտացումը քիչ հավանական ե գալընում:


Մեծ այզիներում յերբեմն այնպիսի գործիքներ են գործածվում, վորոնցով հարմար և ոգտվել առանց բարդ հաշվումների վիճմելու:

Կապկերի ցրտեր նախազգուշացնող գործիքը (նկ. 40) աչքի յե ընկնում իր կառուցվածքի ամենամեծ պարզությամբ. նա բաղկացած ե յերկու ջերմաչափից—չոր և թրջված: Թրջված ջերմաչափի գնդիկը փաթաթված ե բատիստով. բատիստի ծայրն իջեցնում են ջրով լցած անոթի մեջ: Յերկու ջերմաչափերն ել ամրացված են սպիտակ արծնած տախտակի: Չոր ջերմաչափի ցուցնակի գծերը ու են. նըանք ըելվում են աջ—դեպի ներքև: Թրջված ջերմաչափի ցուցնակի գծերը կարմիր են: Յերկու ջերմաչափերի մեջտեղի տախտակի այն մաթը, վորում հատվում են կարմիր և ու գծերը, ներկված ե յերեք գույնով—սպիտակ, գեղին և կապույտ (վերի դաշտն սպիտակ ե, մեջտեղինը՝ գեղին և ցածինը՝ կապույտ):

Յերկու ջերմաչափերի ցուցնակների գծերի հատման կետը սպիտակ փոնի վրա ցույց ե տալիս, վոր ցուրտ հաստատապես չի լինի, հատման կետը գեղին դաշտում ցույց ե տալիս, վոր հավանորեն ցուրտ կիննի, իսկ կապույտ գաշտի վրա ընկած հատման կետը ցույց ե տալիս, վոր հաստատապես ցուրտ կիննի: Դիտման ժամանակ հաշվում են չոր և թրջված ջերմաչափերի ցուցնումները, վինտուում են յերկու ջերմաչափերի սնդիկի վերին ծայրերից տարածվող գծերի հատման կետերը:

Կան և այնպիսի գործիքներ, վորոնք ավտոմատ կերպով, այսինքն, առանց մեր կողմից վորեալ դիտումների և հաշվումների, իմացնում են ցրտերի մուտենալու մասին: Այդ գործիքներից

ամենից շատ տարածված ե Ռիշարի աղղանշանային ջերմաչափը (նկ. 41): Նրա գլխավոր մասը բաղկացած է տափակ արուրային, միքիչ կորացած տուփից, վորը լցված է տոլուլով (սա մի տեսակ հեղուկ է, վորի ծավալը, նայած ջերմաստիճանի փոփոխության, մեծանում է կամ փոքրանում): Տուփի մի ծայրն ամրացվում է այնպես, վոր նաև անշարժ լինի, իսկ մյուս ծայրին ամրացված է սլաքի հետ միացած լժակը: Ջերմաստիճանի փոփոխության դեպքում տուփը կորանում է կամ մի քիչ ուղղվում: Այդ շարժումները հաղորդվում են լժակին: Լժակը շարժում է սլաքը, վորը ջերմաստիճանի իջեցման դեպքում շարժվում է դեպի ձախ, իսկ բարձրանալու դեպքում՝ աջ: Ալաքի գիրքը վարոշելու համար գոյություն ունի աստիճանների բաժանված ցուցնակ: Ապակյա կափարիչին ցածի կողմից յերկու մետաղյա թերթիկներ են ամրացված, վորոնց կարելի յետեղից շարժել և դնել ցուցնակի վորեւ բաժանման վրա: Թերթիկները միացած են ելեկտրական զանգակի լարի հետ: Զանգակը գտնվում է այն սենյակում, ուր ապրում է դիտողը: Թերթիկները կանգնեցնում են վորեւ ջերմաստիճանի վրա,




նկ. 40. Կողպելերի ցուրտ նախազգուշացնող գործիքը:

2<sup>o</sup> վրա: Յերբ վոր գիշերը ջերմաստիճանն ընկնի մինչև այդ սահմանը, ապա սլաքը կկպչի թերթիկն, ելեկտրական զանգակը կզանգահարի, և դիտողը կա-

բող և պատշաճ միջոցների պիմել հնարավոր ցրտի դիմ պայքարելու համար:

Իր ժամանակին ձեռք տոած միջոցներով կարելի յե կտանցնել կամ, համենայն դեպքում, թուլացնել բույսերի վրա գործող ցրտի ազդեցությունը:

Կուլտուրական բույսերը ցրտից պաշտպանելու համար ամենից հաճախ ծխի ամպեր են ստեղծում: Դրա համար այդքներում կամ բանջարանոցներում վազորով գոմազրի, հողածուխի, փտած



նկ. 41. Ցրտեր նախազգուշացնող Ռիշարի գործիքը:

տերեների կամ թանձր ծուխ տվող այլ նյութերի կույտեր են զնում: Այդ կույտերը վասում են այն ժամանակ, յերբ ողի ջերմաստիճանն իջնում է մինչև 2—4°: Ծխի ամպը կանգնեցնում է ջերմության կորուսալ ճառագայթման միջոցով և կանգնեցնում է ողի ստորին շերտերի հետագա ստուցումը:

Ամերիկայում ցրտերի զեմ պայքարելու համար հաճախ հատուկ ջեռոցների միջոցով տաքացնում են ողը: այդ ջեռոցները լցված են լինում զյուրավառ նյութով—նավթով, մազութով, քարածխով:

Վերջին տարիները մեզ մոտ ել Սեվիլյան ափերում մանդարինի և կիտրոնի պլանտացիաների պաշտպանության համար նույնպիսի ջեռոցներ են գործածվում:

ՀԱՅԱՎԱՐ Ե ԱՐԴՅՈՒԹ ՅԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿՈՎ ՆԱԽԱՏԵՍՆԵԼ  
ՅԵՂԱՆԱԿԸ

ները միատեսակ յերկարության լինելին, կամ փոփոխվելին վարոց որինաչափությամբ, ապա գծվար չեր լինի պարզել նրանց կրկնվողությունը, և այդպիսով նախատեսնել յեղանակի փոփոխությունները: Բայց այդ ալիքները զանազան յերկարության են և իրար հետեւամ են անկանոն ձևով: Բարդ հաշվումներով աշխատում են հարթել նրանց, պարզեցնել և վերջիվերջո զծել տեսական ալիքածե մի գիծ, վորը պետք ե բնութաղը յեղանակի փոփոխությունը միքանի որ առաջ:

Այսպիսով միքանի գիտնականներ փորձում են լուծել յեղանակի տուշիկա փոփոխությունների հարցը, բայց նրանց կանխորոշումներն առայժմ բավականաչափ հաջող արդյունքներ չեն տալիս:

Վերեւում շոշափած յեղանակի պարբերական տատանումների հարցի կապակցությամբ դրված և կլիմայի տատանումների հարցը: Դերմանացի գիտնական բրյուկները փորձում եր մի շարք նշաններով պարզել կլիմայի տատանումների 35 տարվա պարբերականությունը: Նա ցույց տվեց, վոր գոյություն ունի մեծ քանակությամբ տեղումներով և ողի իջեցված ջերմությամբ տարիներով: Ենթափոխություն ավելի չոր և ավելի տաք տարիներով:

Ենթապական մայր ցամաքում, ըստ մի քանի հարցուր ողերությանական կայանների նյութերի և ուժից տվյալների, անցած յերկու հարյուրամյակում խոնավ և չոր շրջանների հետևյալ հերթափոխությունն եր դիտվում:

Խոնավ շրջաններ.

1691—1715 թ.

Զոր շրջաններ.

1716—1735 թ.

1736—1755

1756—1770

1771—1780

1781—1805

1806—1825

1826—1840

1841—1855

1856—1870

1871—1885

1886—1900

Անցյալ հարյուրամյակում ամենից շատ խոնավ տարիներն եյին՝ 1815, 1846—1850, 1876—1880, իսկ ամենից շատ չորային տարիներն եյին՝ 1831—1835 և 1861—1865:

Պարբերականություն սահմանելու համար Բրյուկները վոչ միայն ողերությանական գիտումներով եր ողտպում, վորոնց տեսականությունը լավագույն զեղքում 150 տարուց չի անցնում: Բացի զրանից, Բրյուկները զննեց Կասպից ծովի մակերևույթի տատանումները և հոսանք չունեցող լճերի մակերևույթը, ոռուական գետերի բացման և սառման ժամկետները, ողի ջերմաստի-

հանները և ձնշումը, տեղումների տարեկան քանակը: Նա նույնապես զննեց խաղողի հավաքի դրանցումները սկսած 1591 թ., հացի գնի տատանումների տվյալները, նյութեր սաստիկ ձմեռների ժամանակամաս 1020 թ., ալպիական սառցադաշտերի մոտենալը և նահանջը:

Կլիմայի տատանումների հարցին միքիչ այլ կերպ մոտեցավ պրոֆեսոր Բոգոլյառովը, վորը ոռուսական տարեդրական դրանցումների ուսումնասիրության հիման վրա ընդունում և ալիքի այլ տեսողականություն - 33,3 տարի և այս տեսողականությունը նա կապում և արենի բժերի 11 տարվա պարբերականության հետ:

Ակադեմիկոս Դավիթը ոռուսական ոթերևութարանական կայանների տվյալների հիման վրա հանդեց այն յեղքակացության, վոր կլիմայի ալիքի տատանման տևողությունը հավասար և մոտավորապես 30 տարու:

Այդ տատանումների հետագա ուսումնասիրությունը ցույց տվեց, վոր կլիմայի տատանումներում վոչ միայն 33 և 11 տարվա պարբերականություն գոյություն ունի, այլև կան ավելի կարճ տատանումներ 2,8-ից մինչև 3,5 տարի: Այդ տատանումները, յեթե նրանց գծագրով նկարել մեկը մյուսի վրա յին ընկնում, և կլիմայի տատանումների ընթացքի շատ բարդ կորագիծ և ստացվում, վորոնց վորոշելը շատ դժվար է:

Յերկարատև կանխորշշումների մեկ ուրիշ միջոցը հիմնը փում և այն կապի վրա, վորը գոյություն ունի յերկրագնդի զանազան մտսերի ողերեւութարանական յերեւյթների մեջ:

Մթնոլորտում աեղի ունեցող բոլոր զանազանակերպ պրոցեսների հիմնական պատճառը հանդիսանում և ոդային զանդվածների ընդհանուր տեղափոխությունը, վորը կատարվում և հասարակածային գոտում գետնի մակերեսի ուժքին տաքանալու և ընկերացին յերկրների սառնության հետեւանքով: Հասարակածի մոտ տաք խոնավ ողը շարունակ բարձրանում և վերև: Այդ ողի հասանքին ոժանդակում են այսպիս կոչվող պաստառները, այսինքն այն քամիները, վարոնք փչում են ողի ստորին շերտերում: Հյուսիսային կիսագնդում հյուսիսից գեպի հասարակածը, հարավային կիսագնդում հարավից: Վերին շերտերում պաստառներին համապատասխանում են հակառակ ուղղության ողի հոսանքը, այսպիս կոչված հակապաստառները: Ողային զանդվածների այդ հոսանքը հասարակածից գեպի հյուսիս և հարավ շարժման ժամանակ յենթարկում յերկրի պտտվելու թեքող աղդեցության, վորի հե-

տևանքով միջին լայնություններում նա արդեն արևմտյան ուղղություն ունի: Եերկրի պտտվելուց առաջացած կինտրոնաբիույն ուժի աղդեցությամբ այդ ոդային զանդվածը նորից հետ և շպըրտվում դեպի հասարակած: Սա մի կողմից միջին լայնություններում ողային զանդվածների կուտակում և ստեղծում, մյուս կողմից՝ ավելի հյուսիսային գոտիներում՝ ողի նոսրացում: Այսպիսով գետնի յերեսին ստեղծվում և բարձր ձնշման ողակ հյուսիսային կիսագնդում հյուսիսային լայնության 30 և 60° միջև, սա Ազորյան հակացիկոնն և տմառը և Արևելյան-սիրիայան հակացիկոնը՝ ձմեռը: Մյուս կողմից, ողի ցած ջերմաստիճանները բեկեռային շրջաններում, կծկցնելով ողը, առաջացնում են ոդային վերին շերտերի իջեցում և, հետևաբար, ողի հոսանք բարեխառն լայնություններից: Սրանից առաջացած բարձր և շումը, վոր բռնում և անդրբեկնեռային շրջանները, սառըն շերտերում ողի շարժում և ստեղծում դեպի հարավ, վորը յերկրի պտտվելուց թեքվում և արեվելյան ուղղությամբ: Տեղի յեւնենում հասարակածային և բեկեռային հոսանքների անընդհատ պայքար, վորի մասին մենք ասել ենք վերմում:

Վորովինեակ յերկրի մթնոլորտում կատարվող բոլոր յերեւությունների հիմքում ընկած և ոդային զանդվածների տեղափոխությունը, ուստի ինքնըստինքյան ակներն և, վոր այդ յերեվույթների ընթացքի միջ յերկրագնդի զանազան մասերում պետք և վորոշ կապ գոյություն ունենա: Այդ կապն իսկապես նկատվում է: Այսպես, հոգկացի ողերեւութարաններն արդեն վաղուց են պարզել, վոր ձյան առաստության հետ չիմալայներում, ինդոստանում յերաշտ և լինում: Հոկտեմբերից մինչև մարտ Սիրիում թափվող տեղումների և դրան անմիջապես հետեւղ շրջանում հնդկաստանի անձրեայնության միջև հարուբերակցություն գոյություն ունի:

Ձմեռային անձեռային ժամանակը Յերրարյան կղզիներում վորոյում և հետեւյալ ամառվա անձրեայնությունը Բեռլինում: Բայց Յերրարյան կղզիների անձրեները, իրենց հերթին, կախված են նախընթաց ամսովանից Լաբբագորում:

Գիտնական Պետերսոնը պարզեց, վոր նորվեգիական ծովի տաքության և Սկանդինավյան թերակղզու ջերմաստիճանի միջև կապ գոյություն ունի: 4—5 ամսով ուղացումով այդ տատառումներն անդրադառնում են Գիրմանիայի վրա:

Ուստի գիտնական պրոֆեսոր Վիզեն ցույց տվեց, վոր Բա-

բնացի ծռվի սառույցների քանակի և Յելրոպայի հռախո-  
արևմտյան մայիս և հունիս ամիսների ջերմության միջև վորոշ  
կտակ գոյություն ունի: Բարենցի ծռվի սառույցների աղդե-  
ցությունը ներգործում է մայիս-հունիսյան ջերմության անկման  
վրա վոչ միտյն Յելրոպայի հյուսիսային մասում, այլև շատ հա-  
րավ—բալթիկ ծովում և Լեհաստանում: Իսկ Բարենցի ծռվի  
սառույցների քանակն ինքը կախում ունի, ըստ Վիզեյի կարծի-  
քի, այն ողային հոսանքներից, վորոնք հասարակածից գնում են  
դեպի բնվեռ:

Պրոֆեսոր Վիզեն նույնպես հաստատեց մի շատ հետաքրքիր  
կառլ Վիկտորիա լճի (Աֆրիկայում—հասարակածի մոտ) ջրի  
հունվար—փետրվար ամիսների մակերեսյթի և Բարենցի ծռվի  
սառույցների մակերեսի միջև մայիս—ոգոստոս ամիսներին: Վիզեն  
այդ կապը հետեւյալ կերպ ե բացատրում: Վիկտորիա լճի ջրի մակե-  
րեսյթը վորոշվում ե այն տեղումներով, վորոնք թափվումեն լճի  
ավագանում: Այն տարիները, յերբ հասարակածի մոտ գտնվող  
այդ լճի շրջանում շատ անձրեւ ե գալիս, այնտեղ պետք ե ուժ-  
գին կերպով տաք ողի վեր բարձրացող շարժում կատարվի: Իսկ  
ողի վեր բարձրացող զանգվածը, ինչպես առաջ եյին տում,  
հասարակածից վերին շերտերում ցրվում ե զեպի բեկոնները:  
Սրա համեմատ յենթարևադային գոտում ուժեղանում ե մթնու-  
լորտային ճնշումը, իսկ բեկոնային շրջանի մյուս կողմում ճըն-  
շումը պակասում ե: Յած ճնշումն այնտեղ պայմանավորում է  
ավելի բարձր ջերմաստիճաններ և պատճառ սառցայնություն:  
Ուստի պետք ե սպասել, վոր այն տարիները, յերբ բեկոնային  
յերկրներում ցած ճնշում ե լինում, արեադարձային գոտում նոր-  
մայից ավելի մեծ քանակությամբ տեղումներ պիտի լինեն, և  
Վիկտորիա լճի ջրի մակարդակը պետք ե սովորականից բարձր  
լինի: Իսկ այն տարիները, յերբ բեկոնային յերկրներում  
բարձր ճնշում և մեծ քանակությամբ սառույցներ են լինում,  
ընդհակառակը, պետք ե սպասել վոր Վիկտորիա լճի ջրի մակե-  
րեսյթը ցած կինի, վորը և հաստատվում ե Վիզեյի կողմից  
հաշված կապով այդ յերեւյթների միջև: Այսպիսով, բեկոնային  
ծռվերի սառույցները կարծես թե, մթնոլորտի ընդհանուր վի-  
ճակի ցուցանիշ են հանգիսանում:

Ողերեւութաբանական յերեւյթների միջև գոյություն ու-  
նեցող վերեւում ցույց տրված բոլոր կախվածությունները յերկ-  
րագնդի զանազան մասերում կարող են ծառայել յեղանակի պայ-  
մանների նախառեւությանը, բայց գեռ բավականաշափ մանրա-

մասն, պրակտիկ գործունեյության համար անհրաժեշտ յեղանա-  
նակի կանխորշումներ չեն առած:

Մեզ մոտ վերջին 10—12 տարում յերկարաժակ կանխորշ-  
շումների հարցերը մշակվում եյին և ներկայումս ել մշակվում  
են Գլուավոր գեղինդիկան դիտարանում ակադեմիկոս Բ. Պ.  
Մուլտանվակուր ղեկավարությում: Նրա կողմից մշակած մեթոդի  
հիմքում ընկած ե հակացիկլոնների տեղաշարժման ձանապարհ-  
ների ուսումնասիրությունը:

Հակացիկլոնների ուղիները շատ բարդ են, բայց Բ. Պ.  
Մուլտանվակին առանձին խմբերի բաժանեց նրանց ըստ իրենց  
ծագման աեղի: Պարզվեց, վոր, յեթև Արկտիկայից յեկար հակա-  
ցիկլոնների համար ճանապարհ գծել քարտեզի վրա, ապա նկատ-  
վում են զերակառող ուղղություններ կամ առանցքներ, վորոնցով  
տեղաշարժվում են այդ հակացիկլոնները: Նրանք յերկու կենտրոն-  
ներից բաժանվում են իրեն յերկու փռւնջեր, վորոնցից մեկն ըն-  
կած ե Գլունլանդիայի մոտ, մյուսը՝ Թիրակղու մոտ:

Բացի արկտիկական առանցքներից, հայտնաբերվեցին՝  
աղորյան առանցք, վորն արեամուտքից գնում ե գետի արեելք,  
և այսպես կոչված աղորյան ուժեղացրածը, վորը գնում ե հա-  
րավարեամուտքից:

Ցույց տված առանցքներից մեկով հակացիկլոնի անցնելը յե-  
ղանակի վորոշ պայմաններ և ստեղծում: Սինոպտիկական քարտե-  
զի վրա վորոշ ժամանակամիջոցում մի շաբթ ցեղանների և հակա-  
ցիկլոնների անցումը նշանակելով, կազմում են համփոփ քարտեզ:՝  
Այդպիսի քարտեզների ուսումնասիրությունը ցույց տվեց, վոր  
հակացիկլոնների և ցեղանների կենտրոնները խմբավորվում են  
վորոշակի շերտերով, կազմելով բարձր և ցած ճնշման այսպիս  
կոչվող բարիչյան դաշտեր: Բարիչյան դաշտերը սովորաբար տե-  
ղավորվում են առանցքների շուրջը, հետեւաբար, ըստ բարիչյան  
դաշտերի տեղափորման կարելի յե դատել, թե վոր առանցքով են  
շաբթվում հակացիկլոնները:

Հակացիկլոնների անցնելը մի վորեւ վորոշ առանցքով տե-  
ղում ե մոտավորապես 10—12 որ: Այդ շրջանը կոչվում ե բնա-  
կան սինոպտիկ շրջան:

Յեթև 2—3 որվա ընթացքում հակացիկլոնները սկսում են  
խմբվել մի վորեւ վորոշ առանցքի շուրջը, ապա սա ցույց և տա-  
լիս, վոր սկսում ե բնական շրջանը և, ըստ սկզբի կարելի յե

ՅԵՂԱՆՈԿԻ ԿԱՌԱՋՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՆՇԱՌԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ  
ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏՍՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՄՑՈՐ

վորոշել, թե մասցած 8—10 որվա ընթացքում ինչպիսի յեղանակ ե լինելու:

Յեթե վորոշ ժամանակից հետո բարձր ճնշման բարիչյան դաշտում սկսեն կուտակվել ցած ճնշման կենորուններ, ապա սա ցույց ե տալիս, վոր շուտով վերջանալու յե բնական շրջանը ե մոտենում ե նորը:

Այսպիսով, նաև մի քանի (մինչև յերեք) ամիս առաջ կատարվող յերեսույթների համար քարտեզներ են կազմվում: Այդ քարտեզների հիման վրա կազմվում են մոտակա ամիսների կանխորոշումները:

Մարդը գեռ չի տիրացել բնության շատ ուժերի: Նա դեռևս չի կարողանում ղեկավարել յեղանակը և փոխել այն ըստ իր ցանկացածի: Դեռևս շատ կան այնպիսի հարցեր, վորոնց վորոշակի և ճշգրիտ պատասխան տալ գիտությունն անզոր եւ կապիտալիստական հասարակության մեջ գիտական գիտելիքների բազմակողմանի զարգացման համար բավականաչափ պայմաններ չկան: Միայն մեր սոցիալիստական պետության մեջ գիտության զարգացման համար անսահման հնարավորություններ են ստեղծված: Յեւ կասկած չկա, վոր ապագայում մարդկությունը կտիրի նաև յեղանակի յերեսույթներին և կկարգավորի այն հոգուտ ժողովական անահետության: Բայց առայժմ մենք անզոր ենք պայքարելու բնության քմահաճույքների դեմ: Մենք չենք կարողանում անձեւ առաջացնել, յերբ վոր նա պետք ե, կամ կանդնեցնել այն, յերբ վոր նա խանդարում ե: Ճիշտ ե, այդ ուղղությու մը արգեն փորձեր արվում են, սակայն նրանք գեռ միայն գիտական նշանակություն ունեն:

Ամպերի խացման միջոցով անձրև բերելու բազմաթիվ փորձեր արվել են Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այդ նպատակով ելեկոր պատումներ եյին անում, սավառնակներից ելեկորականացած ավազ եյին թափում, բայց այդ փորձերից վորոշակի, գիտականորեն ստուգված հետևանքներ չստացվեցին: Հաջող եյին սավառնակներից ելեկորական ավազ ցրելու միջոցով մառախուզներ նստեցնելու փորձերը: Բայց այդ բոլոր փորձերն առայժմ միայն գիտական հետաքրքրություն ունեն:

Սրանից վոչ շատ առաջ կարկտահարության դեմ մղած պայքարում կարկտի ամպերը ցրով հատուկ մոլարիներից կրակելու միջոցով բազմաթիվ փորձեր արվեցին:

Այդ մոբակիները թնդանոթի մի տեսակ եյին, վորոնք յե-

կար կոնածե կամ ձագարածե փողեր ունելին: Կրակելու ժամանակ այդ թնդանոթներից դուրս ելին թռչում ծխի ողակներ, վորոնք զարնվում ելին կարկտի ամպերին: Այս փորձերը բարեհաջող արդյունք չտվին: Նույնպես անհաջող անցան կարկտի ամպերի վրա պայտող նյութերով լցրած հրթիռներ կրակելու փորձերը: Վորոշ արդյունք չտվին նաև եթեկարական լարվածության վրա հիմնված զանազան ձեռնարկումները:

Այդ անհաջողությունները, ի հարկե, չեն ապացուցում, վորմարդիկ յեղանակի յեղեռյթների դեմ պայքարելու համար անզոր են:

Որում թռչելու փորձերն ել շատ տարիների ընթացքում անհաջող ելին անցնում: Միայն գիտական գիտելիքների զարգացումը, տեխնիկայի կատարելագործությունը մարդկանց հաղթանակ տվեց ոդային տարերայնության դեմ:

Թեև դեռևս մենք չենք կարողանում անձրև բերել կամ յերաշուր կանգնեցնել, բայց ժամանակին ձեռնարկած միջոցներով—նողի պատշաճ մշակումով, ժամանուկին ցանելով, դաշտերն արևեստականորեն ջրելով մենք կարող ենք մեղմացնել, իսկ հաճախ նաև բոլորին կանխել յերաշտի ֆլամակաց ազդեցությունը:

Բայց վորպիսզի պայքարել յեղանակի անբարենպաստ յերերյթներն դեմ, անհրաժեշտ և նախատեսնել նրանց:

Նախատեսներով գիշերային ցուրաբ, մեր կոլտնտեսություններն իրենց այդիների և բանջարանոցների պաշտպանության համար կարող են սիջոցների դիմել—ծխի ամպեր կամ արհեստական մօռախուղներ ստեղծել: Բերքը հավաքելու ժամանակ յեղանակի կանխորոշումը հնարավորություն կտա ավելի լավ ոգտագործել լավ յեղանակի շրջանները:

Չմեռային բորանները և ձնարքերը հաճախ խախտում են յերկաթուղային տրանսպորտի շարժումը: Այդ յերեռյթների ժամանակին կանխորոշումը յերկաթուղու վարչություններին հնարավորություն կտա միջոցների դիմել ժամանակին մաքրելու ուղիները, սպառնացող ուղեմասը բանվարներ փոխազրել:

Քիչ կարեոր չենաև յուրաքանչյուր նաևի կապիտանի համար վաղորոք իմանալ առաջիկա փոթորկի մասին, վորպեսզի պատրաստվել նրան դիմավորելու, իսկ յերբեմն նույնիսկ խուսափել նրանից:

Առանձնատպի կարեոր և առաջիկա յեղանակի մասին իմառ ձկնորսների համար, վորոնք հաճախ խորտակվում են ափից

հեռու ձկնորսության գնալով: Թե վորքան են շահագոգոված ձըկնորսային արտելները յեղանակի կանխորոշման մեջ, կարելի յեղատել նրանով, վոր նորվեգիայում յեղանակի ծառայությունը մեծ գույն չափով պահպանվ և ձկնորսային ընկերությունների և արտելների հաշվով: Մեզ մոտ կասպից ծովում և Մուրմանի ափում ձկնորսական արտելները յեղանակի կանխորոշումներով սպասարկող հատուկ բյուրոներ գոյություն ունեն: Փոթորկի մասին ժամանակին արած նախազգուշացումները ձկնորսների հարյուրավոր կյանքեր են փրկում:

Բացառիկ կարեւը նշանակություն ունեն յեղանակի կանխորշումներն ավիացիայի համար: Վոչ մի ինքնաթիռ գետնից վերեւ չի բարձրանա, չիմանալով, թե ինչպիսի յեղանակ և սպասում նրան ձանապարհին: Ուստի համար առանձնապես վտանգավոր և մառախուղը ցած իջնելու ժամանակի Յուբաթանչյուր աերոպորտին և աերոգրոմին կից վոյություն ունի ողերեւութաբանական կայան: Թուշելուց առողջ ոդաչուն տեղեկություններ եւ ստանում մթնոլորտի վիճակի մասին, իսկ յեղանակի բյուրություն իմանում ե, թե ինչպիսի յեղանակ և սպասում նրան ձանապարհին: Մեծ թուշքները սաղիոյի միջոցով են սպասարկվում առաջիկա յեղանակի մասին յեղած տվյալներով: ԱնՏ-25-ի հերոսական թռիչքի հաջողությունը մեծ չափով կախված եր նրանից, վոր ինքնաթիռի շտուրման, Խորհրդային Միության հերոս, ընկելյակոմը անընդհատ տեղեկություններ եր ստանում ինքնաթիռի ճանապարհին սպասուղ յեղանակի մասին:

Յուրաքանչյուր ոդային տրաստ սպասարկվում և ողերեւութաբանական կայանների կողմից, վորոնք հայտնում են ոդաչուներին յեղանակի պայմանների մասին: Խորհրդային Միության հերոս ընկելյակոմը կապիտան լուս-Անժելոսից Մուկվա թռչելիս շարունակ ուղիոյի միջոցով կապված եր նրա ճանապարհի վրա գտնված ողերեւութաբանական կայանների հետ:

Այս բոլորը ցույց են տալիս, վոր յեղանակի ծառայություն նը մեզ մոտ բացառիկ կարեւը պետական նշանակություն ունի:

ԳԼՈՒԽ 4.

Ինչպես են կատարում յեղանակի կանխորոշումը սինովտի-	64
կական քարտեղի վրա . . . . .	
Ինչ բան և սինովտիկական քարտեղը և ինչպես են նա	
կազմվում . . . . .	64
Յեղանակի կանխորոշումը . . . . .	66
Կանխորոշման հաղորդումը ռադիոյի միջոցով . . . . .	69

ԳԼՈՒԽ 5.

Ինչպես նախատեսնել յեղանակի փոփոխությունները տեղական	71
նշաններով . . . . .	
Հասկացողություն տեղական նշանների մասին . . . . .	71
Հաստատուն լավ յեղանակի նշաններ . . . . .	73
Հաստատուն վատ յեղանակի նշաններ . . . . .	80
Յեղանակը դեպի վատը փոխվելու նշաններ . . . . .	80
Յեղանակը դեպի լավը փոխվելու նշաններ . . . . .	81
Ամպրովի մոտենալու նշաններ . . . . .	82
Յեղանակի փոփոխության ուրիշ նշաններ . . . . .	82
Ցրտերի նախատեսությունը և նրանց գեմ պայքարելու	
միջոցները . . . . .	83

ԳԼՈՒԽ 6.

Հնարավոր և արդյոք յերկար ժամանակով նախատեսնել յե-	
ղանակը . . . . .	83

ԳԼՈՒԽ 7.

Յեղանակի կանխորոշումների նշանակությունը մեր ժողովը-	
գական տնտեսության մեջ . . . . .	95

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

62

ԳԼՈՒԽ 1.


Յերկրի ուղային թաղանթը և նըանում կատարվող յերեսութ-	
ները . . . . .	3
Ներածություն . . . . .	3
Ողը և նրա հիմնական հատկությունները . . . . .	4
Մթնոլորտային ողի կազմությունը . . . . .	8
Զբային գոլորշիներն ողում Յող յեղյամ, ցողյեղյամ,	
սառուկ, մառախուղ, ամպեր . . . . .	10
Փոշին ողում, չոր մառախուղներ, մեղ . . . . .	14
Ողային հովանքների պատճառը յերկրի մակերեսութի-	
անհավասարաչափ տականալն ե . . . . .	16

ԳԼՈՒԽ 2.

Ինչպես են կատարում յեղանակի դիտումները . . . . .	18
Ողերեսութաբանական կայաններ . . . . .	18
Ողերեսութաբանական կարևորագույն գործիքները և	
նրանց տեղակայումն ողերեսութաբանական կայան-	
ներում . . . . .	19
Ամպամածության և ամպերի դիտումներ . . . . .	30
Դիտումներ մթնոլորտի վերին շերտերում . . . . .	38

ԳԼՈՒԽ 3.

Ինչից են տուածանում յեղանակի փոփոխությունները . . . . .	41
Ողային զանգվածների տեղափոխությունները . . . . .	41
Հասկացողություն ճակատների մասին: Տաք և ցուրտ	
ճակատներ . . . . .	43
Ցիկլոնների ծագումը: Հակացիկոններ . . . . .	46
Յեղանակը ց/կլոներում և հակացիկոններում . . . . .	49
Ամպերը և նրանց ծագումը: տեղումներ . . . . .	55
Կարկուտ, ամպրոպ . . . . .	57



Թարգմանեց՝ Ս. Բոշնայան  
Դիմ. Խմբագիր՝ Լ. Սկյուռով  
Տէխ. Խմբագիր՝ Լ. Ոհանյան  
Վրբ սգրիչ՝ Խ. Այվաղյան

Հրատ. 4581, պատվեր 367, տիրաժ 3000

Հանձնված և արտադրության 1938 թ. ազգի 8-ին

Ստորագրված և ապագրության 1938 թ. հունիսի 25-ին

Գետիքտոփի Ձ. Բոշնայան, Յերևան, Նումանոյան 5

ՀՀ Ազգային գրադարան



NL0999850

27 ОКТ. 1938

ԳԻՆԸ 2 Ր. 60 Կ.

511

11  
30269

П. И. НЕКРАСОВ  
ПОГОДА  
И ЕЕ  
ПРЕДВИДЕНИЕ

ГИЗ АРМ. ССР, ЕРЕВАН